Ս. ԱՍԱՐԵՍՅԱՆՑ

# ԱՌԱՔՈՒՅՑ
# ՊԱՏՄԱՐԱՆԻՆԵՐԸ
# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
# 1920 ԹՎԱԿԱՆԻՆ

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

# ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՐԻ ԴԻՄԵՆՏԻ
ԴՐՈՒԴԱՐՋԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1955

Քաղաքացիական պատերազմի դպրոցն իզուր չի անցնում ժողովուրդների համար: Այդ մի ծանր դպրոց է, և նրա լիակատար դասընթացն անխուսափելիորեն պարունակում է իր մեջ կոնտրռևոլյուցիայի հաղթանակներ, զգազած ռեակցիոնների սանձարձակություններ, հին իշխանության վայրագություններ /խռովարարների նկատմամբ և այլն: Սակայն միայն մոլի պեղանտները և խելքը կորցրած մումիաները կարող են մոռանվել ժողովուրդների՝ այդ տանջալից դպրոցը մտնելու առթիվ. այդ դպրոցը սովորեցնում է նոր դասակարգերին քաղաքացիական պատերազմ վարելը, սովորեցնում է հաղթական ռևոլյուցիա:

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Հայ ժողովրդի ազատ ռևոլյուցիոն մարտիկներ իրենց կյանքն են տվել, զոհվել են՝ իրենց ժողովրդի համար ազգային-ազատ երջանիկ կյանք ձեռք բերելու համար:

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի պատմության մեջ 1920 թվականի Մայիսյան հերոսական ապըստամբությունն առանձնահատուկ տեղ է գրավում։ Մայիսյան օրերին Հայաստանի բանվորները, աշխատավոր գյուղացիները և զինվորները, կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ, զինված պայքարի ելան ամերիկա-անգլիական գիշատիչ իմպերիալիստների կամակատար դաշնակների արյունոտ տիրապետության դեմ։ Աշխատավոր ժողովրդի կամքով մեկ ամիս շարունակ Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում հաղթականորեն ծածանվում էր Սովետների կարմիր դրոշը՝ ազատություն ու անկախություն ավետելով Հայաստանի բազմաչարչար աշխատավորությանը։

Չնայած Մայիսյան ապստամբության ժամանակավոր պարտությանը, նա հանդիսացավ քաղաքացիական պատերազմի դպրոց, որի բովում

Հայաստանի աշխատավոր մասսաները և կոմունիստական կազմակերպությունները կոփվեցին, արժեքավոր դասեր առան՝ հանուն Սովետական իշխանության հաղթանակի մղած իրենց հետագա հերոսական պայքարի համար։

# ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻՑ ՀԵՏՈ

*1920 թվականի Մայիսյան ապստամբությունը սերտորեն կապված է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի հետ։*

*1917 թվականի հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին), մարդկության հանճար Վ. Ի. Լենինի կողմից գլխավորվող Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, մեր երկրի բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիության հետ դաշնակցած, տապալեց կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը և երկրագնդի մեկ վեցերորդ մասում ստեղծեց աշխարհում առաջին Սովետական սոցիալիստական պետությունը։*

*Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան համաշխարհային պատմության մեջ բացեց հին աշխարհի՝ կապիտալիզմի խորտակման և նոր աշխարհի՝ սոցիալիզմի հաղթանակի դարաշրջանը։*

Սովետական իշխանությունը ստեղծեց բոլոր պայմանները Կոմունիստական պարտիայի ազգային ծրագրի իրագործման, կապիտալի լծից Ռուսաստանում ապրող բոլոր ազգերի ու ժողովուրդների իսկական ազատագրման և նոր կյանքի կառուցման համար։

Հոկտեմբերյան ռևոլյուցիան Ռուսաստանի բազմաթիվ ժողովուրդներին ազատագրելով ազգային ճնշումից, նոր դարաշրջան բացեց նաև հայ ժողովրդի համար։

Ժողովուրդների հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը և նրա հավատարիմ աշակերտ Ի. Վ. Ստալինը ամենայն պարզությամբ և հստակությամբ նշել են, որ ինչպես բոլոր ճնշված ժողովուրդների, այնպես էլ հայ բազմաչարչար ժողովրդի ազատագրության միակ ուղին Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ցույց տված ուղին է։ «...Պարզ է դառնում,— գրել է Ի. Վ. Ստալինը 1917 թ. դեկտեմբերի 31-ին «Պրավդա» թերթում,— որ ճնշված ժողովուրդների ազատագրության ուղին անցնում է Ռուսաստանում հոկտեմբերին սկսված բանվորական ռևոլյուցիայի միջով։ Այժմ պարզ է ամենքի համար, որ Ռուսաստանի ժողովուրդների բախտը, իսկ առանձնապես հայ ժողովրդի բախտը, սերտորեն

կապված է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի բախտի հետ»[1]։

Բազմաչարչար հայ ժողովուրդը, որ դարեր շարունակ ազատագրական պայքար էր մղում ներքին կեղեքիչների և արտաքին բազմաթիվ նվաճողների դեմ, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի լուրն ընդունեց հսկայական խանդավառությամբ։

Իր եղբայրական վրաց և ադրբեջանական ժողովուրդների հետ միասին, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ, նա ոտքի ելավ՝ Անդրկովկասում ևս Սովետական իշխանություն հաստատելու։ Այդ պայքարի ավանդարդում գնում էր Բաքվի հերոսական պրոլետարիատը։ Ռևոլյուցիայից հետո Հայաստանի տասնյակ հազարավոր բանվորներ, գյուղացիներ, իրենց բազմաթիվ միտինգներում ու ժողովներում ընդունած բանաձևերում ողջունում էին Վ. Ի. Լենինի գլխավորած ժողովրդական Կոմիսարների Սովետը, Սովետական իշխանության միջոցառումները և պատրաստակամություն հայտնում՝ զենքը ձեռքներին պաշտպանել նրանց կոնտրռևոլյուցիոն ուժերի բոլոր հարձակումներից։ «...Երդվում ենք զենքը ձեռքներիս պաշտպանել նոր Բանվորա-գյուղացիական

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 30—31։

կառավարությունը,—հայտարարում էին 1917 թ. նոյեմբերի 10-ին Ալեքսանդրոպոլում տեղի ունեցած միտինգի մասնակիցները,—և պատրաստ ենք վճռական հակահարված տալու կոնտրռևոլյուցիոն տարրերին, եթե նրանք փորձեն դեմ գնալ Սովետական իշխանությանը։

Ողջունում ենք համաշխարհային պրոլետարական ռևոլյուցիայի առաջնորդ, քաղաքային և գյուղական չքավորության փորձված պաշտպան Լենինին»[1]։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի հետևանքով ստեղծվել էին բոլոր պայմանները Անդրկովկասում ևս Սովետական իշխանություն հաստատելու և Սովետական Ռուսաստանին միանալու համար։ Սակայն անդրկովկասյան հակասովետական, կոնտրռևոլյուցիոն ուժերը՝ վրաց, հայ և ադրբեջանական ժողովուրդների ոխերիմ թշնամիները՝ վրացական մենշևիկները, դաշնակները և մուսավաթականները, իրենց օտարերկրյա տերերի՝ գերմանա-թյուրքական և անգլո-ամերիկյան իմպերիալիստների հետ ստոր գործարքի մեջ մտնելով, անջատեցին Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը Սովետական Ռուսաստանից և այն դարձրին պլացդարմ Ռուսաստանի դեմ պայքարելու համար։ 1918 թվականի մայիսի վերջերին

[1] «Կավկազսկի բաբոչի», № 208, 1917։

ստեղծվեցին—Վրաստանում՝ մենշևիկյան, Ադրբեջանում՝ մուսավաթական, Հայաստանում՝ դաշնակցական կոնտրռևոլյուցիոն բուրժուա-նացիոնալիստական «կառավարություններ»։

Դաշնակցությանը Հայաստանի «անկախությունն» անհրաժեշտ էր բոլշևիզմի դեմ պայքարելու համար։ Նրանց պարագլուխները լկտիաբար ասում էին, որ «Անկախության հայտարարումը մենք հասկանում ենք որպես բոլշևիզմի դեմ պայքարի ձևերից մեկը»[1]։

* * *

1918—1920 թվականներին Հայաստանի աշխատավորությունը տառապում էր դաշնակների և նրանց օտարերկրյա տերերի արյունոտ լծի տակ։ Դաշնակների երկու և կես տարվա տիրապետությունը Հայաստանում հայ ժողովրդի պատմության ամենամռայլ ժամանակաշրջաններից էր։ Դաշնակցական «կառավարությունը» խաղալիք էր աշխատավոր ժողովրդի ոխերիմ թշնամիներ՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և այլ իմպերիալիստական տերությունների ձեռ-

---

1 ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտարեկ, հատուկ ֆոնդ։

քին։ Նրանք Հայաստանում պահում էին բազմաթիվ գաղութարարներ, տատիկաններ, լրտեսներ, հատուկ բանտեր։ Անտանտայի իմպերիալիստների կողմից Հայաստանում գերագույն կոմիսար նշանակված ամերիկյան օբեր-բանդիտ Հասկելի խոսքը օրենք էր դաշնակների համար։ Ահա, թե ինչ է գրում այն ժամանակ Հայաստանում լույս տեսնող «Նոռվա գյուղացիության ձայնը» բոլշևիկյան թերթը, իրենց «քաղաքակիրթ» համարող ամերիկյան իմպերիալիստների «գործերի» մասին Լոռում. «Հայտնի է, որ նեյտրալ զոնան կառավարվում է Վրաստանի ու Հայաստանի երկու կոմիսարներով, որոնց գլուխ համարվում է ամերիկական մայոր Լևինգստոնը։ Վերջինս նշանակվեց անգլիական կարծեմ Դուգլաս անունով մայորի հեռանալուց հետո։

Ինչո՞վ է զբաղված էդ ամերիկացի մայորը էս «վայրենի» երկրում, ամբողջ Լոռին կասի Ձեզ՝ սպեկուլյացիայով և ճարբեցողությամբ...

Էդ մայոր Լևինգստոնը շատ սիրում է կոնծել, ինչպես և Ալավերդու շուրջը վխտացող բախտախնդիրները։ Ջահաննամը մայորի գլուխը, երբան ուզում է կոնծի, միայն թե իր տանը նստի։ Մի բան, որ Լոռին շատ բան չի սպասում Եվրոպայի էդ տեսակ զաստրալյորներից։ Բայց խնդիրը նրանումն է, որ մայոր Լևինգստոնը շատ է սի-

ում Բաքուին ծառայելուց հետո ընկնել մեր գեղեցիկ սարերն ու ձորերը, սքանչելի սեռի ավելի սքանչելի հուրիների ուղեկցությամբ և ցույց տալ ամերիկյան բուլվարային կյանքի ինտիմ կողմերը»[1]:

Ամերիկա-անգլիական գաղութարարների վայրագությունները այն տեղն էին հասել, որ նրանք կենքով դատաստան էին տեսնում բանվորների և գյուղացիների ամբողջ խմբերի հետ: Առանձնապես դաժանորեն էին հետապնդվում կոմունիստները:

1919 թվականի հունվարին, Երևանում՝ Ֆրանսիայի կովկասյան ներկայացուցչի անվան տակ գործող լրտես Պուադեբարը, իր գործակալների միջոցով իմանալով Ալեքսանդրապոլի բոլշևիկների ռևոլյուցիոն գործունեության մասին, դաշնակներից պահանջում էր վճռական քայլերի դիմել կոմունիստական շարժումները ճնշելու համար[2]:

Նույն թվականի մարտին, անգլիական լրտեսների տվյալների հիման վրա և նրանց օգնությամբ, անգլիական գաղութարարներն ու նրանց դաշնակցական լակեյները ամեն կերպ հետապնդում են Ալեքսանդրապոլում գործող անլեգալ բոլշևիկյան կոմիտեն և ցանկանում պատժել նրա անդամնե-

---

[1] «Հոսող գյուղացիության ձայնը», № 1, 1920:

[2] ՏԵՍ ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, գ. 200, թ. 56:

ին, որոնք սերտ կապ էին հաստատել երկաթուղային բանվորների ու զինվորների հետ և ջերմ աջակցություն ստանալով մասսաներից հաջողությամբ ռևոլյուցիոն պայքար էին ծավալում դաշնակցության տիրապետության դեմ[1]։

Անգլիական օկուպանտների ակտիվ միջամտությամբ 1919 թ. մայիսին հայտնաբերվում և արգելվում է «Սպարտակ» անլեգալ երիտասարդական թերթը, որի առաջին համարը լույս էր տեսել մայիսի 1-ին։ Անգլո-ամերիկյան իմպերիալիստները դաշնակների հետ միասին դաժան դատաստան են տեսնում Հայաստանի ռևոլյուցիոն երիտասարդության հետ, գաղանաբար ճնշում նրանց ռևոլյուցիոն ելույթի ամեն մի փորձ։

«Մոտ օրերս,—գրում էր Բաքվում լույս տեսնող կոմունիստական «Ռաբոչի պուտ» թերթը 1919 թ. սեպտեմբերի 3-ին,—«Սպարտակ» խումբը բաց թողեց մի կոչ, որը խարազանում է անգլիացիների քաղաքականությունը, կոչ է անում տապալել «դաշնակների» կառավարությունը և կազմել բանվորա-գյուղացիական իշխանություն, որը և միայն ընդունակ է լուծելու ազգային հարցը ու վերջ տալու ներկայումս տեղի ունեցող սպանդին։ Բաց թողնված կոչի համար բոլոր քաղաք-

[1] ՏԵ՛ս ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 199, գ. 12, թ. 77—78։

ներում կատարվել են ռևոլյուցիոն շարժման ղեկավարների ձերբակալություններ։

Երևանում ձերբակալված է 30 մարդ, նրանց մեջ կան կանայք։

Ալեքսանդրոպոլում դնդակահարված է 6 մարդ»[1]։

Լակեյարար կատարելով օտարերկրյա իմպերիալիստների կամքը, դաշնակները կատարյալ կործանման էին հասցրել Հայաստանը, իսկ հայ ժողովրդին կանգնեցրել ֆիզիկական բնաջնջման առաջ։

Հայաստանը դաշնակների տիրապետության ժամանակ սովի ու մահվան, գաղթականության, սրյան, արցունքի, անվերջ պատերազմների ու կոտորածների երկիր էր։ Դաշնակցական Հայաստանում տիրում էր կատարյալ անարխիա, իսպառ բացակայում էր կյանքի ու գույքի ապահովությունը, օրենքի փոխարեն իշխում էր մաուզերի կամայականությունն ու քմահաճույքը։ Դաշնակ խմբապետները իրենց ցանկությամբ կարող էին անպատիժ կերպով կողոպտել ու սպանել մարդկանց, կանգնեցնել երկաթուղային երթևեկությունը։ Դաշնակ պաշտոնյաները, սկսած ամենափոքր աստիճանավորից մինչև մինիստրը թույլ էին տալիս անօրինակ սանձարձակություններ, բռնություններ, կաշառակերություն և զեղծումներ։

[1] «Ռաբոչի պուտ», № 4, 1919։

Անգամ դաշնակ թերթուկներն ստիպված էին խոստովանել, որ Հայաստանը մի կատարյալ դժոխք էր։ «Գրեթե ամեն օր և ամեն կողմե մեզի կհասնին գողության, մարդասպանության, թալանի, ծեծի ու բռնությանց լուրեր,—գրում էր «Աշխատանք» թերթուկը։—Վաղարշապատի մեջ ներկա ամսույս սկզբեն հաշվելով տասն և հինգ օրվա ընթացքին տեղի ունեցել է տասնհինգ մարդասպանության դեպք... Նույն պատկերը, հարակից հավելումներով և ավելի այլանդակ գույներով, գոյություն ունի և մյուս շրջաններում... Ահա Երևան... կներկայանա քաոսային և խռովատանջ վիճակի մը մեջ. գողության դեպքեր գրեթե ամեն կիշեր և բոլոր անկյունները, սպանության և վիրավորման դեպքեր հատ, հատ և հաճախ երեքով, չորսով, ծեծ, բռնություն, անհանդուրժելի շարժ ու ձևեր ամեն րոպեին մեր աչքերը կխոթվին՝ խոլական խուժումով մը։ Մարդիկ գիշերները դուրս գալեն կզգուշանան, ժողովի, երեկույթի հաճախելեն կվախնան. տեսակ մը երկյուղ, անորոշ անվստահություն մը համակել է ամենքը։ Պետք կա՞ հիշելու ամեն գիշեր տեղի ունեցող հրաձգության մասին, որոնք երբեմն ամբողջ քաղաքին մարտադաշտի մը երևույթը կուտան»։

[1] «Աշխատանք», № 12, 1919։

Դաշնակների ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով Հայաստանի առանց այն էլ քայքայված տնտեսությունը լիակատար կործանման էր հասել։ Այն մի քանի արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք կառուցվել էին մինչև պատերազմը, կամ քայքայվել ու դադարել էին գործելուց և կամ անչափ կրճատել թողարկվող արտադրության քանակը։

1919 թվականին Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թվականի համեմատությամբ կրճատվեց 12,2 անգամ, իսկ գյուղատնտեսության արտադրանքը՝ 5,8 անգամ[1]։ Հսկայական չափերով կրճատվեցին ցանքատարածությունները, ծայրահեղորեն ընկավ բերքատվությունը, անասունների գլխաքանակը, խիստ պակասեց աշխատունակ ուժը, իջավ աշխատանքի արտադրողականությունը։ Եթե ամբողջ ցանքային տարածությունը 1913 թվականին Հայաստանի ներկա տերիտորիայում հասնում էր 345,7 հազար հեկտարի, ապա 1919 թվականին հասավ 82,7 հազար հեկտարի։ 1913 թ. Հայաստանում ցանվել էր 15,3 հազար հեկտար բամբակ, իսկ 1919 թ. միայն 0,6 հազար հեկտար։ Անասունների քանակը 1919 թ., նախապատերազմյան շրջանի համեմա-

[1] Տե՛ս Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.). Статистический сборник, Ереван, 1940, էջ 23, 47։



397—2

Հայաստանի Գրադարան Гос. Библиотека ZUUP-Арм. ССР

տությամբ, կրճատվեց 70 տոկոսով, այդիների բերքը կազմեց նախապատերազմյան բերքի 10—15 տոկոսը։

Սովն ու համաճարակները հնձում էին աշխատավոր մասսաներին։ Հայաստանի բնակչության նվազումը 1919 թ. յուրաքանչյուր հազար հոգուն կազմում էր 195,5 մարդ։ Դաշնակցական դժոխքում Հայաստանի այն ժամանակվա բնակչության մոտ մեկ երրորդը ոչնչացավ։

Դաշնակցության տիրապետության շրջանում չտեսնված չափերի հասավ բանվորների ու գյուղացիների անխնա շահագործումը, ել ավելի վատացավ նրանց տնտեսական դրությունը։ Բանվորները շափազանց դժվար պայմաններում աշխատում էին օրական 14—18 ժամ և ստանում չափից դուրս ցածր աշխատավարձ։ Նրանց նկատմամբ մոլեգնում էր տերերի քմահաճույքն ու դաժանությունները։

Ահա թե ինչպես էր նկարագրում իրենց ծանր դրությունը Երևանի մի բանվոր կոմունիստական «Խոսք» թերթում. «Մենք հանձնված ենք խաղեյինների քմահաճույքին։ Որքան ուզում աշխատեցնում են։ Եթե դուք շաբաթ օրերն անցնեք մեզ մոտ, կտեսնեք, որ մենք առավոտյան ժամը 7-ից մինչև գիշերվա ժամը 12-ը ոտքի վրա ենք։ Ճաշելու և թեյելու համար մեզ տրվում է մի ժամ։

Նշանակում է 16 ժամ անընդհատ աշխատում ենք։ Երբ մի անգամ փորձ արինք բողոքելու, մեզ իսկույն լռեցնել տվին, առարկելով, թե «արտաքին թշնամին մոտ է»[1]։

Երևանում գտնվող Սարգիսովի կաշվի «գործարանի» բանվորները ոտաբոբիկ աշխատում էին մի շենքում, որի հատակը ծածկված էր կրի, բրդի, հոտած մսի կտորներով շաղախված ջրով։

Սոսկալի ծանր էր երկաթուղային բանվորների դրությունը։ Մի պաշտոնական փաստաթղթում դաշնակների տիրապետության ժամանակ Հայաստանի երկաթուղայինների դրության մասին ասված է. «Շատ հաճախ էր պատահում, որ բանվորը քաղցից ուշաթափվում և ընկնում էր բահը կամ մուրճը ձեռքին, շարունակ կրկնվում և սովորական երևույթ էր դառել քաղցածությունից մեռնելն ու ցրտից սառչելը...»[2]։

Սովի ու մահվան էին դատապարտված նաև աշխատավոր գյուղացիները։ Դաշնակցական կառավարությունը շարունակում էր ցարական կառավարության բուրժուա-կալվածատիրական ագրարային քաղաքականությունը։ Մի խումբ կալվածատերեր, կուլակներ ու վաշխառուներ իրենց ձեռքն էին կենտրոնացրել հողի մեծ մասը, իսկ գյուղա-

1 «Խոսք», № 2, 1918։
2 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 65, գ. 156, թ. 210։

ցիական մասսաները սովամահ էին լինում։ Դաշնակներն ուղղակի հայտարարում էին, որ «հողային սեփականությունը սրբություն է, ոչ ոք իրավունք չունի կալվածատիրոջը դիպչել»[1]։

Ահա թե ինչ է գրում դաշնակցական Հայաստանում պահպանված խոշոր հողատիրության մասին «Լոռվա գյուղացիության ձայնը» թերթը. «Լոռում մինչև այժմ շարունակվում է նույնիսկ խոշոր հողատիրությունը։ Մի Սուլեյման Ալի Օղլի, մի Հասան բեկ Եդիգարով, և այլ բեկեր մինչև օրս էլ շահագործում են Քորբլուի, Այրումի, Լճկաձորի և մյուս գյուղերի գյուղացիությանը։ Մի Մոսնաց Վասիլ մինչև օրս էլ կալվածատեր է 1135 դեսյատին սքանչելի վարելահողի. մի Արամյան մինչև օրս էլ «իր» անտառից վագոններով փայտ է կտրում ու հաղարներով ծախում, իսկ ավելի մանր ազնվականներ ու հողատերեր,— զանազան արղությաններ, շահվերդյաններ, քալանթարյաններ, բաշբեյուկ-մելիքյաններ և այլն և այլն—համոզված, որ հողերը ձեռներից պիտի գնա, որ էդ հողերը էլ իրենց չեն պատկանում, որ հողը քաղաքներում նստած պարոններից պիտի խլվեն ու տրվեն էն գյուղացուն, որ քրտնում ու իր օրերը մթնացնում է էդ հողի վրա,—շտապում են ծախծխել, շտապում են խեղճ գյուղացուց փող պոկել։

[1] «Լոռվա գյուղացիության ձայնը», № 2, 1920։

Հողային խնդիրը Լոռում էն կետի վրա է կանգնած, ինչ բոնապետական ռեժիմում։

Երբ Մղարթեցիք ու Ղաչաղանցիք փորձեցին դիմադրել կալվածատիրությանը, Ալավերդու Կոմիսարիատից, անգլիական դուբեռնատորից ինչ-որ թուղթ դուրս բերին, թե՝ խելոք կացեք, ձեր պամեշչիկին միք նեղացնի»[1]։

Դրությունն այսպես էր նաև Հայաստանի մյուս շրջաններում։

Դաշնակցական կառավարության կողմից հովանավորվող կալվածատերերը և կուլակները երեք տակ կաշի էին հանում գյուղացիներից։ Զինամանալով դաժան շահագործմանը, սովին ու կամայականություններին, գյուղացիները թողնում էին իրենց վերջին հողակտորը և հեռանում գյուղից՝ որևէ աշխատանք գտնելու հույսով, դրանով իսկ ավելի մեծացնելով քաղաքային գործազրկության բանակը։

«Թերևս աշխարհի ոչ մի անկյունում այնպիսի արագությամբ չի աճում թշվառների, խեղճերի ու շահագործվողների բանակը, որպիսի արագությամբ այդ կատարվում է Հայաստանի գյուղերում,—գրում էր «Կոմունիստ» թերթը 1920 թ. ապրիլին,—իրականությունը ներկայացնում է մի սոսկալի պատկեր։ Այն աշխատավոր գյուղացին,

1 «Լոռվա գյուղացիության ձայնը», № 2, 1920։

որը երկար ու ձիգ տարիների արյուն-քրտինքով ձեռք էր բերել մի զույգ եզ՝ այսօր ստիպված է ծախել կուլակին այդ եզները՝ յուր ընտանիքը քաղցի ու մերկության անողոք ճիրաններից գոնե ժամանակավորապես փրկելու։

...Աղքատների ու անգործների, հալածյալների ու շահագործվողների թիվն աճում է օրերով ու ժամերով, մյուս կողմից ել գյուղի տնտեսությունը փաստորեն կենտրոնանում է ազգաբնակության միայն մի քանի տոկոսը կազմող կուլակների ձեռքում, որոնց հովանավորում է դաշնակցական կառավարությունը, հանուն «ազգային կապիտալի» ուժեղացման։ Եվ այս ամենի հետևանքով բնականաբար արագորեն աճում է գյուղական թշվառացած հոծ մասսաների դժգոհությունն ընդդեմ կուլակների ու սրանց հովանավորող կառավարությանը»[1]։

* *
*

Դաշնակների և նրանց օտարերկրյա տերերի հակաժողովրդական, ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով ստեղծված այդ դժոխային դրությունից ազատվելու միակ ելքը Հայաստանի բանվորներն ու գյուղացիները տեսնում էին առա մեծ ժողովրդի օգնությամբ, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, զին-

[1] «Կոմունիստ», № 2, 1920։

ված պայքարի միջոցով Հայաստանում սովետական կարգերի հաստատման մեջ։

Չնայած կոնտրռևոլյուցիոն ուժերի բոլոր մեքենայություններին, նրանց չհաջողվեց ճնշել Հայաստանի աշխատավորության ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի ալիքը, որն առանձնապես մեծ չափեր էր ընդունել Մեծ Հոկտեմբերից հետո և ընթանում էր երկրում Սովետական իշխանություն հաստատելու նշանաբանով։

Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի տեղական ջոկատները հանդիսացող Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, որոնք ունեին ցարիզմի, բուրժուազիայի և կոնտրռևոլյուցիոն պարտիաների դեմ մղած պայքարի հարուստ փորձ, անձնվեր ու համարձակ կերպով ղեկավարում էին բանվորների, աշխատավոր գյուղացիության և զինվորների ռևոլյուցիոն ելույթները։ Հայաստանի կոմունիստները կատարելով մեծ Լենինի ցուցումները, պարտիայի Կենտրոնական Կոմիտեի դիրեկտիվները՝ համառ ու համբերատար աշխատանքով ամրապնդում էին իրենց կապերը մասսաների հետ և հաղթահարելով բոլոր դժվարությունները համախմբում նրանց Կոմունիստական պարտիայի շուրջը։

Չնայած Սովետական Ռուսաստանի ծանր դրությանը՝ օտարերկրյա ռազմական ինտերվենցիա-

յին և քաղաքացիական պատերազմին, Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը մեծ ուշադրություն էին նվիրում դաշնակների լծի տակ տառապող հայ ժողովրդի փրկության գործին։ Վ. Ի. Լենինն ու Ի. Վ. Ստալինը, իրենց հավատարիմ աշակերտներ ու զինակիցներ Գ. Կ. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի և Ա. Ի. Միկոյանի միջոցով, հսկայական օգնություն են կազմակերպում Հայաստանի աշխատավորությանը՝ նրանց մղած ազատագրական պայքարում։

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի ցուցումներով, ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեն և անձամբ Ս. Օրջոնիկիձեն ու Ա. Միկոյանը Թիֆլիսից և Բաքվից փոխված պարտիական աշխատողներ են ուղարկում Հայաստան, ընդհատակյա աշխատանքի դժվար պայմաններում սիստեմատիկորեն ղեկավարում և տեղություն են տալիս Հայաստանի բոլշևիկների գործունեությանը։ Նրանց առաջարկով, 1918—1920 թվականներին, Հայաստանի տարբեր վայրերում պարտիական աշխատանքի են գալիս կոփված ու անձնվեր բոլշևիկներ Ասքանազ Մռավյանը, Ստեփան Ալավերդյանը, Բագրատ Ղարիբջանյանը, Հովհաննես Սարուխանյանը, Եգոր Սևյանը, Բագրատ Հարությունյանը, Ղուկաս Ղուկասյանը, Ենոք Մկրտումյանը,

Արշալույս Փանյանը, Սերգո Մարտիկյանը, Հակոբ Կամարին և ուրիշներ։

1919 թվականին Հայաստանում սկսվում է ռևոլյուցիոն շարժումների նոր վերելք։ Աճում է կոմունիստների ազդեցությունը պրոֆմիություններում, գյուղացիության մեջ, բանակում և երիտասարդության շրջանում։ 1919 թվականի ապրիլին, կոմունիստների ղեկավարությամբ, հիմնադրվում է Հայաստանի Կոմունիստական երիտասարդական «Սպարտակ» միությունը, որը սերտ կապեր ունենալով Վրաստանի և Ադրբեջանի կոմերիտական կազմակերպությունների հետ, խոշոր դեր է կատարում երիտասարդությանը Սովետական իշխանության համար մղած ռևոլյուցիոն պայքարի մեջ ներգրավելու գործում։ Պարտիայի հանձնարարականով Հայաստանի կոմերիտական կազմակերպություններում ղեկավար աշխատանք էին կատարում երիտասարդ կոմունիստներ Ղուկաս Ղուկասյանը, Արմենակ Բուդաղյանը, Աղասի Խանջյանը և ուրիշները։

ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի ղեկավարությամբ 1919 թվականի սեպտեմբերին Երևանում տեղի է ունենում Հայաստանի Կոմունիստական կազմակերպությունների խորհրդակցությունը, որն ընտրում է ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտե (Արմենկոմ) և սկիզբ դնում Հայաս-

տանի կոմունիստական կազմակերպությունների միավորմանը։ ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի կազմում մտնում են Ա. Մռավյանը, Ս. Ալավերդյանը, Ս. Կասյանը, Ղ. Ղուկասյանը, Դ. Շահվերդյանը, Ս. Մարտիկյանը և ուրիշները։

1920 թվականի հունվարին Երևանում գումարվում է Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին անլեգալ կոնֆերենցիան, որին մասնակցում էին Երևանի, Ալեքսանդրոպոլի, Սարիղամիշի, Կարսի, Նոր Բայազետի, Ղազախ-Շամշադինի, Դիլիջանի, Լոռու «չեզոք զոնայի» պարտիական կազմակերպությունների 22 պատգամավոր՝ պարտիայի 1200 անդամի ներկայացուցիչներ։ Կոնֆերենցիան ավարտում է Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների միավորումը մի ղեկավար կենտրոնի շուրջը և նրանց նպատակամղում դեպի զինված ապըստամբություն, որը պետք է սկսվեր Կարմիր Բանակի զորամասերի Հայաստանի սահմաններին մոտենալիս։

1920 թվականի մարտին, երբ փառապանծ Կարմիր Բանակը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ փայլուն հաղթանակներ տանելով օտարերկրյա ինտերվենտների և սպիտակգվարդիական բանդաների դեմ, մոտենում էր Կովկասի դարպասներին, ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային

Կոմիտեն և Կովկասի բոլոր ժողովուրդների աշխատավոր մասսաների ներկայացուցիչները դիմում են Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեին, ժողովրդական Կոմիսարների Սովետին, Կոմունիստական Ինտերնացիոնալին և Կարմիր Բանակին, ռազմական օգնություն ցույց տալու իրենց՝ բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների և օտարերկրյա զավթիչների լծից ազատագրվելու համար։ «...Մենք,—գրում էին նրանք,— անսասանորեն վստահ ենք և հաստատ համոզված, որ Սովետական բանվորա-գյուղացիական Ռուսաստանը, Կոմունիստական Ինտերնացիոնալը և փառապանծ Կարմիր Բանակը չեն մնա այն անհավասար պայքարի անտարբեր ականատեսներ, որ մենք մղում ենք դեղին-սև միացյալ կոնտրռևոլյուցիայի դեմ և ակտիվ կերպով կօգնեն մեզ՝ ազատվելու կապիտալի իշխանությունից։

Մենք խիստ տենչում ենք ռուս պրոլետարիատի հետ ձեռք-ձեռքի տված մտնել ընդհանուր աշխատանքի և սոցիալիստական շինարարության նոր կյանքի մեջ»[1]։

Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ցուցումներով 11-րդ Կարմիր Բանակը՝ Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի և Ա. Միկո-

[1] ՍՄԿՊ Կենտկոմին կից Մ.Լ.Մ-ի Վրացական ֆիլիալի պարտարխիվ, բոլշևիկյան թռուցիկների ֆոնդ։

յանի ղեկավարությամբ անմիջապես իր օգնության ձեռքն է մեկնում Անդրկովկասի ժողովուրդներին։ 1920 թ. ապրիլի 28-ին, Կարմիր Բանակի զորամասերի ակտիվ օժանդակությամբ, Ադրբեջանի ապըստամբած աշխատավորությունը տապալում է ատելի մուսավաթականների ու նրանց օտարերկրյա տերերի լուծը և Ադրբեջանում հաստատում Սովետական իշխանություն։

Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի ստեղծումը խոշոր նշանակություն ունեցավ Հայաստանը և Վրաստանը դաշնակների, մենշևիկների և օտարերկրյա իմպերիալիստների լծից ազատագրելու գործում։ «Այն մոմենտից,— գրել է Ս. Օրջոնիկիձեն,— երբ Սովետական իշխանությունը հաստատվեց Ադրբեջանում, Ադրբեջանը դարձավ մեր ելակետը, որտեղից մենք գրոհեցինք մենշևիկների և դաշնակների նացիոնալիստական-բուրժուական կոնտրռևոլյուցիոն կառավարությունների վրա»[1]։

Սովետական կարգերի հաստատումը Ադրբեջանում Հայաստանի աշխատավոր մասսաների մեջ առաջացնում է ռևոլյուցիոն բուռն խանդավառություն, ամրապնդում է նրանց հավատը մոտալուտ հաղթանակի նկատմամբ։

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Հայպետհրատ, 1950, էջ 108։

## ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեն և տեղական կազմակերպությունները 1920 թ. ապրիլին որոշում են և նախապատրաստվում համաշխարհային պրոլետարիատի մարտական ուժերի ստուգատեսի օրը՝ Մայիսի 1-ին անցկացնել ցույցեր՝ աշխատավորությանը Կոմունիստական պարտիայի դրոշի տակ համախմբելու նշանաբանով։ «Մայիսի մեկի ելույթի համար մենք պատրաստվում էինք ամենուրեք, մեզ համար այդ օրը խաղաղ ցույցի միջոցով մեր ուժերի զորատեսի օր պետք է հանդիսանար»— հայտնում էր ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեն Կովկասյան Երկրային Կոմիտեին 1920 թ. մայիսի 31-ի զեկուցագրում[1]։

1920 թ. մայիսի 1-ին Հայաստանի բոլոր շրջաններում, քաղաքներում և գյուղերում տեղի են

---

1 ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆոնդ 33։

ունենում բանվորների, գյուղացիների և զինվորների բազմամարդ ցույցեր ու միտինգներ, որոնք անցնում են կոմունիստների առաջադրած «Կեցցե՞ կոմունիստական մայիսի մեկը», «Կեցցե՞ Սովետական Ռուսաստանը», «Կեցցե՞ Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիան», «Կեցցե՞ ազատարար Կարմիր Բանակը», «Կեցցե՞ Սովետական Ադրբեջանը», «Կեցցե՞ բոլոր ազգերի աշխատավորության համերաշխությունը», «Կեցցե՞ Սովետական Հայաստանը», «Կորչի՞ դաշնակների ավազակային կառավարությունը», «Կորչե՞ն ամերիկա-անգլիական իմպերիալիստները» լոզունգներով։

Երևանում մայիսմեկյան տոնակատարությունն սկսվում է առավոտյան ժամը 8-ից։ ՌԿ(բ)Պ Հայաստանի և Երևանի կոմիտեների ղեկավարությամբ երկաթուղու կայարանի, գարաժի, տպարանի և քաղաքի մյուս բանվորները, թվով մոտ հազար մարդ, հավաքվում են Թարխանյան ու Աստաֆյան փողոցների անկյունը (այժմ Կնունյանցի անվան փողոցից մինչև Աբովյանի անվան փողոցը) և կարմիր դրոշներով ու «Ինտերնացիոնալ» երգելով, Ս. Ալավերդյանի, Ս. Մարտիկյանի, Ղ. Ղուկասյանի, Ա. Խանջյանի և մյուս բոլշևիկների գլխավորությամբ շարժվում դեպի դաշնակցական պառլամենտի շենքը (այժմ Երաժշտական

կոմեդիայի թատրոնի շենքը), որի դիմացը պետք է տեղի ունենար միտինգը։ Շքերթի ժամանակ տարածվում են կոմունիստական թռուցիկներ, թերթեր, բրոշյուրներ։ Բոլշևիկների ագիտացիայի շնորհիվ դաշնակների կողմից ցույցի դուրս բերված շատ մարդիկ, այդ թվում նաև զինվորները, իրենց համերաշխությունն են հայտնում բանվորներին և միանում են բոլշևիկների շքերթին։ Ռ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի հանձնարարությամբ միտինգում ելույթ է ունենում բոցաշունչ ռևոլյուցիոներ Ս. Ալավերդյանը։

Ստեփան Ալավերդյանը հին բոլշևիկ էր։ Ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին նա ակտիվ մասնակցություն էր ունեցել Քութայիսում ծավալված ռևոլյուցիոն շարժումներին։ 1908—1915 թթ. Ալավերդյանը սովորել էր Մոսկվայի Առևտրական ինստիտուտում, միաժամանակ կատարելով պարտիայի մի շարք պատասխանատու հանձնարարություններ։ Իմպերիալիստական պատերազմի տարիներին Ալավերդյանը բազմաթիվ ելույթներ էր ունեցել ցարական կառավարության և բուրժուազիայի դեմ։ 1916—1917 թթ. նա աշխատել էր Սարիղամիշում։ Ալավերդյանի ղեկավարությամբ Սարիղամիշի բոլշևիկները համառ պայքար ծավալեցին բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ՝ Սովետական իշխանու-

թյան հաղթանակի համար։ 1918 թ. Ալավերդյանը Թիֆլիսում բոլշևիկյան ղեկավար աշխատող էր։ Նույն թվականի վերջին նա նորից եկել էր Հայաստան և պարտիական անլեգալ աշխատանք էր կատարում Երևանում։ Լինելով հիանալի հռետոր և կազմակերպիչ Ալավերդյանը մեծ հեղինակություն ուներ ռևոլյուցիոն մասսաների մեջ։ Նրա ելույթները անջնջելի տպավորություն էին թողնում լսողների վրա։ Իր մայիսմեկյան ճառում Ալավերդյանը մերկացնում է օտարերկրյա իմպերիալիստների գործակալներ դաշնակների և վրացական մենշևիկների հակաժողովրդական քաղաքականությունը, անարգանքի սյունին գամում նրանց։ Հայաստանի ռևոլյուցիոն մասսաների, կոմունիստների անունից ողջունելով Սովետական Ադրբեջանի բանվորներին և գյուղացիներին, Ալավերդյանը կոչ է անում Հայաստանում ևս հաստատել սովետական կարգեր։

Դաշնակները, որոնք մայիսյան ցույցերի ժամանակ աշխատավորությանը կոմունիստների ազդեցությունից հետ պահելու համար, նույնպես որոշել էին «նշել» մայիսի 1-ը, փորձում են բռնությամբ ու պրովոկացիայով խանգարել Ալավերդյանի ճառը, բայց ցուցարարները թույլ չեն տալիս և բոլշևիկ հռետորն իր ելույթը վերջացնում է ծափահարությունների տարափի տակ, գոչելով՝

«Կեցցե՞ Կոմունիստական Ինտերնացիոնալը», «Կեցցե՞ կոմունիստական ռևոլյուցիան», «Կեցցե՞ անդրկովկասյան ժողովուրդների եղբայրական կապը»։

Ցուցարարները հակահարված տալով դաշնակների պրովոկացիաներին, համախմբվում են բոլշևիկների շուրջը և նրանց ղեկավարությամբ շարժվում դեպի Փանախանի (այժմ Մ. Ալիևբեկովի անվան) հրապարակը, որտեղ կազմակերպվում է նոր միտինգ։ Ելույթներ են ունենում կոմունիստ և բանվոր հռետորները, որոնք իրենց ճառերում շարունակում են մերկացնել դաշնակների կոնտրռևոլյուցիոն քաղաքականությունը։

Մայիսմեկյան ցույցը Երևանում տևում է մինչև ժամը 4-ը։ Այն սկզբից մինչև վերջ անցնում է կոմունիստների ղեկավարությամբ, բոլշևիկյան լոզունգներով։ Ցույցի ավանգարդում գնում էին բանվորները։

Այդ օրը Երևանի բոլշևիկներին հաջողվում է օգտագործել ռադիոկայանը և ողջույնի ռադիոհեռագրեր ուղարկել Մոսկվա, Բաքու։

Մայիսմեկյան տոնը արտակարգ խանդավառությամբ է անցնում Ալեքսանդրոպոլում։ Վաղ առավոտյան ՌԿ(բ)Պ Ալեքսանդրոպոլի Կոմիտեն կոչով դիմում է քաղաքի ազգաբնակչությանը՝ դուրս գալ փողոց և ակտիվորեն մասնակցել



397—3

մայիսմեկյան ցույցին։ Կոչում ասված էր. «Հայաստանի և Ալեքսանդրոպոլի աշխատավոր մասսաները այսօր համախմբված կոմունիզմի դրոշակի տակ, տոգորված նրա լոզունգներով, ցույց պիտի տան միջազգային գիշատիչ իմպերիալիզմի հայկական հատված՝ դաշնակցական կառավարությանը, որ Հայաստանի սովալլուկ և իրավազուրկ մասսաները պատրաստ են իրենց եղբայրական ձեռքը մեկնել, դաշնակցական կառավարության գլխի վրայով, Բաքվի դռները բախող[1] հաղթական Կարմիր Բանակին ու Բաքվի պրոլետարիատին...»[2]։

Ալեքսանդրոպոլում մայիսմեկյան ցույցերի ժամանակ ավանդարդային դերում գտնվում էին երկաթուղային բանվորները։ Դեպոյում, կենտրոնական հրապարակում (այժմ Կարլ Մարքսի հրապարակ) և Սևերսկի զորանոցներում տեղի ունեցած միտինգները ցույց են տալիս, որ ցուցարարները՝ բանվորներն ու զինվորները, սերտորեն համախմբված էին կոմունիստների շուրջը։ Ցույցի մասնակիցները բուռն համակրանքով են ընդունում պարտիայի Ալեքսանդրոպոլի քաղաքային

[1] Այս կոչը տպագրվել էր մայիսի մեկից մի քանի օր առաջ՝ մինչև Ադրբեջանում սովետական կարգերի հաստատումը։

[2] ՄԵԼՈՒ-ի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 33, գ. 847, թ. 1։

կոմիտեի անդամներ՝ Բագրատ Ղարիբջանյանի, Եզոր Սեյանի, անձնվեր ռևոլյուցիոներ Սարգիս Մուսայելյանի և մյուս բոլշևիկների ելույթները։ Դաշնակների անունից ելույթներ կազմակերպելու բոլոր փորձերը ձախողվում են։ Ցուցարարների հաջողությունները ստիպում են նրանց կողմն անցնել նաև Ալեքսանդրոպոլի կայազորի պետ գեներալ Խաչատուրովին և մի քանի այլ բարձրաստիճան սպաների։ Զինվորները հանդիսավոր կերպով իրենց հայտարարում են կարմիրբանակային և խոսք են տալիս ենթարկվել միայն կարմիր կոմիսարներին։

Բանվորների ու զինվորների բուռն ցանկությամբ ողջույն է ուղարկվում Սովետական Ադրբեջանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեին։ «Ալեքսանդրոպոլի պրոլետարիատը և կարմիր զինվորները,—գրել են նրանք,—կոմունիստական մայիսի մեկի օրը, շրջապատված միջազգային կոմունիստական պրոլետարիատի կարմիր դրոշներով, ողջունում են կարմիր Ադրբեջանի հերոս բանվորներին, գյուղացիներին և զինվորներին՝ հեղափոխական դասակարգային ճակատում նրանց տարած հաղթանակն ընդդեմ մուսավաթականների դավաճանական կառավարության... Այս հանդիսավոր օրը, մենք՝ Հայաստանի բանվորներս, գյուղացի-

ներս ու զինվորներս, հայ մուսավաթականների, հակահեղափոխական դավաճանական կառավարության դլխի վրայով մեկնում ենք մեր եղբայրական ձեռքը ձեզ՝ հեղափոխական բանվորներիդ, գյուղացիներիդ և զինվորներիդ և հանդիսավոր խոստում ենք տալիս դատաստան տեսնել ճնշման և բռնության կառավարության հետ, կառավարության, որ թաթախված է Ադրբեջանի և Հայաստանի տասնյակ հազարավոր բանվոր և գյուղացի անմեղ զոհերի արյան մեջ՝ թափված Զանգեզուրում, Ղարաբաղում, Ադրբայջանում, Ղազախում և Աքուլիսում, ինչպես դուք դատաստան տեսաք թյուրք դաշնակ-մուսավաթականների կառավարության հետ, որպեսզի մեծ Խորհրդային Ռուսաստանի հետ միատեղ, միացած Արևելքի ճնշված ժողովուրդների հետ, տանենք նրանց միջազգային իմպերիալիզմի դեմ»[1]։

Մայիսմեկյան ցույցն Ալեքսանդրոպոլում շարունակվում է մինչև երեկո։ Նրան մասնակցում են ավելի քան 5.000 մարդ։

Մայիսմեկյան տոնակատարության ժամանակ կոմունիստների շուրջն է համախմբվում նաև Կարսի աշխատավորությունը։ Միտինգներ տեղի ունեցան կայարանում և քաղաքային հրապարա-

[1] Մ.Ի.Ա.Սի-ի Հայկական ֆիլիալի պարտարեթի, ֆ. 33, գ. 850, թ. 4—5։

կում։ Այդ մասին հին բոլշևիկ, Մայիսյան ապըստամբության ակտիվ մասնակից Անուշ Փորսուղյանը իր հուշերում գրել է. մայիսմեկյան «երթը հրապարակից շարժվեց դեպի կայարան, ճանապարհին միանալով կայարանի բանվորությանը։ Քաղաքի գլխավոր փողոցներով նորից վերադարձավ հրապարակը։ Բարձր էր մասսաների տրամադրությունը։ Մեծ խանդավառությամբ էին լսում Ադրբեջանի խորհրդայնացման մասին։ Եթե հռետորներն ամբիոն էին բարձրանում, ցուցարարները նախ և առաջ ուզում էին իմանալ խոսողի քաղաքական դեմքը։ Եթե խոսողը կոմունիստ էր, ապա բուռն ոգևորությամբ ծափահարում էին նրան, իսկ եթե մեկը ամբիոն էր բարձրանում «անկուսակցական» անվան տակ—դաշնակցականը—նրան շվացնելով հեռացնում էին ամբիոնից»[1]։

Սարիղամիշում մայիսմեկյան տոնակատարության ժամանակ ակտիվ դեր կատարեցին 4-րդ գնդի զինվորները, որոնք կոմունիստական կազմակերպության ղեկավարությամբ միացան բանվորների հետ և ստիպեցին դաշնակներին ենթարկվելու իրենց կարգադրություններին։ Նրանք հատուկ գնացք ուղարկեցին Կարակուրգան, այնտեղի բանվորներին և զինվորներին հրավիրեցին իրենց

[1] «Խորհրդային Հայաստան», № 100, 1930, 1 մայիսի։

ցույցին և անցկացրին զինվորական շքահանդես՝ բոլշևիկյան լոզունգներով։

«Մայիսի մեկին գնդում կայանում է զորահանդես,—գրում են իրենց հուշերում Սարիղամիշում մայիսյան ապստամբության մասնակից մի խումբ հին բոլշևիկներ,— որից հետո միանում է մեզ կայարանի կազմակերպությունը բանվորության կուռ շարքերի հետ միասին, ի պատիվ որոնց գեներալ Միրիմանյանը հրամայում է «զգաստ» և երաժշտախումբը նվագում է «Ինտերնացիոնալ»։ Բացվում է միտինգը, դուրս են գալիս ընկերներ, խոսելով օրվա նշանակության և այլ թեմաներով, դուրս են գալիս նաև դաշնակների հռետորները, վերջում այլևս նրանց լսող չի լինում և խլացուցիչ աղաղակներով—դալո՜յ, չենք ուզում, հո՜ւռ... դադարեցնում են նրանց ճառերը... թե զինվորության, թե բանվորության տրամադրությունը տոնական էր և բարձր. ամենուրեք լսվում էր կեցցե՜ կոմունիստական կուսակցությունը։ Չէին ուրախանում միայն դաշնակցական պարագլուխները...»[1]։

Մայիսի մեկին բազմամարդ ցույցեր և միտինգներ տեղի ունեցան Ղարաքիլիսայում (այժմ

[1] ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարեկով, տես «Մի ակնարկ Սարիղամիշի կուսաշխատանքների» հիշողությունը։

Կիրովական)։ Ցույցի դուրս եկած բանվորները, զինվորները և նրանց միացած շրջակա գյուղերի գյուղացիները կոմունիստների ղեկավարությամբ, կարմիր դրոշներ պարզած, հավաքվում են քաղաքային հրապարակում և ապա շարժվում դեպի կայարան, որտեղ նրանց էր սպասում տոնականորեն զարդարված գնացքը։ Նստելով գնացք նրանք շարժվում են Սանահին՝ բոլոր կանգառներում կազմակերպելով միտինգներ։ Ղարաքիլիսայում «մայիսի մեկի միտինգին մասնակցում էին մինչև երկու հազար մարդ, որոնք անխտիր կոմունիստների երթի հետևից էին գնում»,[1]—հիշում է մայիսմեկյան միտինգների կազմակերպիչներից մեկը՝ հին բոլշևիկ Վաղինակ Մռավյանը։

Մայիսմեկյան ցույցերը մեծ հաջողությամբ են անցնում Հայաստանի նաև մյուս շրջաններում։

ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեն՝ Բաքու, Ադրբեջանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի նախագահ Նարիման Նարիմանովին ռադիոյով ուղարկած ողջույնում հաղորդում էր.

«Միջազգային պրոլետարիատի տոնին՝ մայիսի մեկին ՌԿԿ (բոլշևիկների) Հայաստանի Կոմիտեն, Հայաստանի բոլոր կենտրոններից չտեսնված գրանդիոզ միտինգների տեղեկություններ է ստա-

[1] ՄԵԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարարխիվ, ընկ. Վ. Մռավյանի հիշողությունները։

ցել։ Հայաստանի պրոլետարիատը, գյուղացիությունը և զինվորները համախմբվելով Երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալի դրոշի տակ, ողջունում են Ադրբեջանի հերոսական պրոլետարիատին, գյուղացիներին և կարմիր զինվորներին, հեղափոխական դասակարգային ճակատում տարած նրանց հաղթանակով, տապալելով մուսավաթական դավաճան կառավարությունը։

Հայաստանի պրոլետարիատը, գյուղացիությունը և հեղափոխական զինվորները, թևավորված այդ հաղթանակով, իրենց ներքին՝ նույնպես դասակարգային ճակատում, հավատում են իրենց հաղթանակի մոտիկությանը, ընդդեմ իրենց մուսավաթականների—դաշնակների դավաճան կառավարության։

Հավատում ենք, որ մոտ է Վրաստանի հեղափոխական պրոլետարիատի և գյուղացիության հաղթանակի ժամը, ընդդեմ իրենց հարստահարող մենշևիկների։

Կեցցե՞ խորհրդային իշխանությունն ամբողջ Անդրկովկասում»[1]։

Մայիսմեկյան ցույցերը Հայաստանում խոշոր նշանակություն ունեցան բանվորների, գյուղացիների և զինվորների քաղաքական դաստիարակության, նրանց Կոմունիստական պարտիայի շուրջն

[1] «Կոմունիստ» (Երևան), № 106, 1935, 10 մայիսի։

էլ ավելի համախմբելու և զինված ապստամբության նախապատրաստման գործում։ Մայիսմեկյան ցույցերից երևում էր, որ Հայաստանի աշխատավոր մասսաները դնում էին կոմունիստների հետևից, համախմբվել էին Սովետական իշխանության դրոշի տակ և պատրաստ էին թոթափելու դաշնակների ու ամերիկա-անգլիական իմպերիալիստների լուծը։

Խոսելով մայիսմեկյան ցույցերի նշանակության մասին, ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեն՝ ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեին ուղարկած զեկուցագրում հայտնում էր. «Մայիսմեկյան ցույցերի հաջողությունն ամենուրեք ակնհայտորեն ցույց տվեց, թե որպիսի խոշոր արմատներ է ձգել պարսիան լայն մասսաների, այդ թվում նաև գինվորական մասսաների մեջ։ Եղել էին տեղեր, որտեղ ազգաբնակչությունը և զորքը բացառապես մեր դրոշակի տակ էին հավաքվել (Ղարաքիլիսա, Սարիղամիշ)։

Այդ օրը (մայիսի մեկին) իշխանությունը գրավելու խնդիրը չէր դրված մեր առաջ, սակայն այդ օրվանից արդեն պարզ էր, որ այդ հարցը ամենամոտ ապագայի հարցն է հանդիսանում։ Այդ ուղղությամբ տենդային աշխատանք սկսվեց, և այդ



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ
(1882—1920)

իսկ նպատակով կազմակերպությունները ռազմական դրության մեջ էին դրված»[1]։

Չնայած գործադրած բոլոր միջոցներին, դաշնակներն անզոր գտնվեցին ճնշելու Հայաստանի աշխատավորության մայիսմեկյան ելույթները, որոնք վերաճում են զինված ապստամբության։

* * *

Ապստամբության դրոշն առաջինը բարձրացնում են Ալեքսանդրոպոլի երկաթուղային բանվորները և կայազորի զինվորները, որոնց մեջ կոմունիստների ազդեցությունը ամենից ուժեղ էր։ Մայիսի 2-ից Ալեքսանդրոպոլի երկաթուղային կայարանը գտնվում էր ապստամբների ձեռքին։

Հրաժարվելով կատարել դաշնակցական «կառավարության» հրամանները, դաշնակցական բանակի «Վարդան զորավար» զրահագնացքի հրամանատար Ս. Մուսայելյանը զրահագնացքը պահում է Ալեքսանդրոպոլում, դնելով այն բոլշևիկների տրամադրության տակ։ «Ինձ հրավիրում էին Երևան ձերբակալելու և զրահապատը խլելու,—գրում է Ս. Մուսայելյանը,—հպատակվել այդ հրամանին, նշանակում էր զրկվել Հայաստանի հանրապետության զորավիգ զրահապատից և մեր կու-

1 ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆեյլիալի պարտարխիվ։

ակցությունը ավերել տալ։ Ես բռնեցի ակտիվ կռվի ուղին և հրաժարվեցի Երևան գնալ»[1]։

Սարգիս Մուսայելյանը հին ռևոլյուցիոներ էր։ Իմպերիալիստական պատերազմի տարիներին նա ակտիվ ռևոլյուցիոն աշխատանք էր կատարել Արևմտյան ռազմաճակատում։ 1918 թ. Մուսայելյանը Ստեփան Շահումյանի և Անաստաս Միկոյանի ղեկավարությամբ մասնակցել էր Բաքվում Սովետական իշխանության հաստատման և պաշտպանության համար մղված պայքարին։ Բաքվի Կոմունայի ժամանակավոր պարտությունից հետո գալով Հայաստան, կապիտան Մուսայելյանը ծառայում էր դաշնակցական բանակում որպես «Վարդան զորավար» զրահագնացքի հրամանատար։ Մայիսյան ապստամբությունից առաջ զրահագնացքում ստեղծվել էր կոմունիստական ընդհատակյա բջիջ, որը ռևոլյուցիոն աշխատանք էր տանում զինվորների մեջ։ Խիզախ ու անձնվեր ռևոլյուցիոներ Ս. Մուսայելյանը խորապես համոզված էր, որ հայ ժողովրդի փրկության միակ ելքը՝ ամերիկա-անգլիական և դաշնակցական լծի տապալումն է, Սովետական իշխանության հաստատումը, որ ռուս մեծ ժողովուրդը, ազատարար Կարմիր Բանակը, բոլշևիկյան պարտիայի ղեկա-

[1] ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 30, դ. 6, թ. 123։

ԲԱԳՐԱՏ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
(1890—1920)

վարությամբ, օգնության կգան բազմաշարշար հայ աշխատավորությանը։ «Կոմունիստական պարտիայի խորին համոզմունքով,—ասում է Ս. Մուսայելյանը 1920 թ. մայիսի 10-ին,—հայ աշխատավոր գյուղացիության և բանվորության փրկությունը ներկա մոմենտում կայանում է միայն Սովետական իշխանություն հայտարարելու մեջ... միակ ժողովուրդը, որ կարող է մեզ փրկել, դա ռուս ռևոլյուցիոն պրոլետարիատն է... Մեզ լավ հայտնի է, որ ռուսական Սովետական իշխանությունը ոչ ոքի չի թողնի վնասելու հայ աշխատավոր ժողովրդին»[1]։

Մայիսի 2—3-ին ստեղծվում են զորամասային կոմիտեներ, որոնք հավատարմության երդում են տալիս զրահագնացքի հրամանատարությանը։ Զրահագնացքը դառնում է ապստամբ ուժերի մարտական շտաբը, որի շուրջն են համախմբվում բանվորական ջոկատներն ու կայազորի զինվորները։

Ալեքսանդրոպոլի բոլշևիկները եռանդուն գործունեություն են ծավալում ռևոլյուցիոն ուժերին մոբիլիզացիայի ենթարկելու և կայարանի, զորամասերի ու քաղաքի միջև սերտ կապ պահպանելու համար։ Բոլոր կարևորագույն վայրերում

[1] ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարեր, ֆ. 15, գ. 1, թ. 42—43։

մասսաների մեջ գործում են բոլշևիկ ագիտատորները։ Աշխուժանում են զորամասերի պարտիական բջիջների աշխատանքները։ Փորձեր են արվում ապստամբեցնելու նաև գավառի գյուղացիներին։

Այս աշխատանքները անմիջականորեն ղեկավարում էր Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կոմիտեն, որի մեջ մտնում էին Բագրատ Ղարիբջանյանը, Եգոր Սեյանը, Սաշա Գրիգորյանը, Գեորգ Հանեսաղլյանը և ուրիշներ։ Մայիսյան օրերին կոմիտեի ծավալած գործունեության մասին Մայիսյան ապստամբության ակտիվ մասնակից, հին բոլշևիկ Կարո Խաչատրյանը գրել է. «Ռևոլյուցիոն և կազմակերպական մեծ աշխատանք է կատարում բոլշևիկների կենտրոնը, որը առժամանակ տեղավորված էր «Վոստոկ» հյուրանոցի շենքում։ Մենք այնտեղ հանդիպում էինք Բագրատ Ղարիբջանյանին, Եգոր Սեյանին, նրանցից ստանում խորհուրդներ ու ցուցումներ»[1]։

Բագրատ Ղարիբջանյանը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների հնագույն գործիչներից էր։ Դեռ պատանի հասակից մտնելով ռևոլյուցիոն շարժումների մեջ, նա ամբողջովին նվիրվել էր պարտիական աշխատանքին և դարձել պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ։ 1916 թ. Ղարիբջան-

---

1 «Բանվոր», № 91, 1955, 10 մայիսի։

յանը, անձնվեր ռևոլյուցիոներ Պյոտր Արվելաձեի հետ միասին, վերականգնել էր Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կազմակերպությունը, որը 1917—1920 թվականներին խոշոր աշխատանք ծավալեց դաշնակներին, մենշևիկներին, էսեռներին և մյուս կոնտրռևոլյուցիոն պարտիաներին մերկացնելու և քաղաքի աշխատավորության՝ Սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարը կազմակերպելու ուղղությամբ։ Լինելով կրթված մարքսիստ-լենինյան, մարքսիզմի շնորհալի պրոպագանդիստ, Ղարիբջանյանը իր բանավոր և գրավոր ելույթներում խորը համոզմունքով նշում էր, որ հայ ժողովրդի ազատագրումը դաշնակների և նրանց օտարերկրյա տերերի լծից հնարավոր է միայն Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ։

Եգոր Սևյանն իր ռևոլյուցիոն մկրտությունը ստացել էր Բաքվի պրոլետարիատի շարքերում։ 1917—1918 թթ. նա ակտիվ կերպով մասնակցել էր Բաքվում Սովետական իշխանության հաղթանակի համար մղված հերոսական պայքարին։ 1919 թ. կեսերին ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի առաջարկով Սևյանը, մի խումբ կոմունիստների (Նիկոլայ Գաբրիելյան, Սաշա Գրիգորյան, Գևորգ Սարգսյան, Վաղարշակ Հովհաննիսյան, Արմենակ Պետրոսյան և ուրիշներ) հետ միասին, եկել էր

ԵԳՈՐ ՍԵՎՅԱՆ
(1885—1920)

Ալեքսանդրոպոլ, որտեղ շարունակում էր իր ակտիվ ռևոլյուցիոն գործունեությունը։ Սևյանը երկաթուղային բանվորների սիրված ղեկավարն ու կազմակերպիչն էր։ Մայիսյան օրերին Սևյանը եռանդուն աշխատանք է ծավալում բանվորական կարմիր գվարդիա ստեղծելու համար։

Ալեքսանդրոպոլում մայիսյան ապստամբության օրերին խոշոր դեր են կատարում առաջին հայկական հեծյալ գնդի զինվորները՝ էսկադրոնի հրամանատար Հովհաննես Բաղրամյանի[1] ղեկավարությամբ։ «Իշխանության գրավման օրից մինչև ապստամբության ճնշումը,—գրել է Հ. Բաղրամյանը,— գունդն ամբողջ ժամանակ ծանր ու պատասխանատու մարտական աշխատանք էր կատարում քաղաքն իր ձեռքում պահելու համար»[2]։

Իշխանության գրավման և այն իրենց ձեռքում պահելու գործում կարևորագույն նշանակություն ուներ ամերիկյան օկուպանտների ջախջախումն ու նրանց դուրս վռնդումը Հայաստանից։ Ամերիկյան օկուպանտները ապստամբության դրոշը վիժեցնելու համար դիմում էին պայքարի ամենաստոր ձևերի։ Նրանք ձգտում էին քայքայել մատակարարման գործը՝ իշխանության գրավման դեպքում բոլշևիկներին կանգնեցնել պարենային լուրջ ճգնաժամի առաջ և դրանով իսկ զրկել նրանց՝ իշ-

1 Այժմ Սովետական Միության մարշալ։
2 «Խորհրդային Հայաստան», № 106, 1927։

խանությունը իրենց ձեռքում պահելու հնարավորությունից։

Քաղաքի աշխատավորությանը պարենամթերքով ապահովելու համար Ալեքսանդրոպոլի բոլշևիկները անմիջապես դիմում են Արմենկոմին, Սովետական Ադրբեջանին և կոնկրետ միջոցներ ձեռք առնում՝ սեփական ուժերով հարցը լուծելու։ Մայիսի 4-ին նրանք շրջաբերական հրահանգ են ուղարկում ամերիկյան ներկայացուցիչներին և քաղաքի պարենավորման հիմնարկներին՝ անհապաղ դադարեցնելու կենսամթերքների թալանը։

Բանվորներն ու զինվորները կոմունիստների գլխավորությամբ խիստ հսկողություն են սահմանում Ալեքսանդրոպոլի երկաթուղային հանգույցում։ Գնացքների երթևեկությունը երկաթուղու Ալեքսանդրոպոլի հատվածում հնարավոր էր միայն քաղաքի բոլշևիկյան կոմիտեի թույլտվությամբ։ Կոմիտեի կարգադրությամբ մայիսի 4-ին Ալեքսանդրոպոլի կայարանում կանգնեցվում է Երևանից Թիֆլիս գնացող գնացքը, որի մեջ գտնվում էին Հայաստանում ամերիկյան միսիայի ներկայացուցիչները։ Ամերիկյան գաղութարարները սարսափած՝ Հայաստանում ծավալվող ռևոլյուցիոն իրադարձություններից և այն բուռն ատելությունից, որ կուտակվել էր հայ ժողովրդի մեջ ԱՄՆ-ի գիշատիչ իմպերիալիստների նկատմամբ,

շտապում էին օր առաջ փախչել Հայաստանից։ Ամերիկյան գործակալ Հասկելն արդեն «հոգ էր» տարել իր գործակիցների հետ Ամերիկա հեռանալու մասին։

Ռևոլյուցիոն բանվորների և զինվորների արդար դատաստանից ազատվելու և իրենց կաշին մի կերպ փրկելու համար ամերիկյան իմպերիալիզմի ստոր գործակալները «երաշխիքներ», «ազնիվ խոսք» են տալիս և միայն խաբեբայությամբ նրանց հաջողվում է հեռանալ Ալեքսանդրոպոլից։ Բայց ամերիկյան դաղութարարները իրենց ստորության համաձայն հրաժարվում են իրենց «երաշխիքներից» և խոսքերից։ Հայաստանից մի կերպ դուրս պրծնելով, նրանք շտապում են պահանջել իրենց դաշնակցական լակեյներից կտրուկ միջոցներ ձեռք առնել Հայաստանում բոլշևիկյան շարժումները ճնշելու, ամերիկացիների անվտանգությունն ապահովելու համար։

Մինչդեռ, ռևոլյուցիոն իրադարձություններն արագությամբ զարգանում էին։

Մայիսի 7-ին ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի, Ալեքսանդրոպոլի, Կարսի, Սարիղամիշի, Դիլիջանի, Քյավթառլուի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությունում քննարկվում է Հայաստանում զինված ապրստամբություն բարձրացնելու հարցը և ընտրվում

ապստամբության ղեկավար կենտրոն՝ Հայաստանի Ռազմա-հեղափոխական Կոմիտե, որի կազմում մտնում են՝ Ս. Մուսայելյանը, Ա. Մելքոնյանը, Գ. Սարգսյանը, Պ. Պետրոսյանը և ուրիշներ։ Ռազմա-հեղափոխական Կոմիտեի ղեկավարությամբ ապստամբները գրավում են Ալեքսանդրապոլ քաղաքը և, բանվորների ու զինվորների կամքով, մայիսի 10-ին Հայաստանում հռչակում Սովետական իշխանություն։

Այս մասին Ռազմա-հեղափոխական Կոմիտեի՝ Հայաստանի աշխատավոր մասսաներին ուղղված կոչի մեջ ասված է. «Պրոլետարիատի, չքավոր գյուղացիության, բանվորների և կարմիր զորքի կամքով Հայաստանի Կոմունիստական պարտիայի Ռազմա-հեղափոխական Կոմիտեն, Հայաստանի ռեսպուբլիկայի մեջ հռչակում է Սովետական իշխանություն։ Այսուհետև մատուզերիզմի, խմբապետների, սպեկուլյանտների վրա հենվող և բռնության, կողոպուտի ու ինքնիշխանության վրա հիմնված դաշնակների կառավարությունը տապալված է։

Ռազմա-հեղափոխական Կոմիտեն կոչ է անում երկրի աղքաբնակչությանը՝ պահպանել հեղափոխական կարգապահություն և կարգ, ստեղծագործական աշխատանքի խանգարման ամեն մի փորձ

կխեղդվի իր բնում Սովետական Հայաստանի կարմիր զորքերի կողմից»[1]։

«Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն և ՌԿ(բ)Պ Ալեքսանդրոպոլի Կոմիտեն հրապարակում են աշխատավորությանն ուղղված մի շարք թռուցիկներ, որոնց մեջ մերկացնում են դաշնակների և նրանց անգլո-ամերիկյան տերերի գիշատիչ քաղաքականությունը, ցույց են տալիս Սովետական Ռուսաստանի հաջողությունները և հաստատ համոզմունք հայտնում, որ, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, Հայաստանում կհաղթանակի և կամրապնդվի Սովետական իշխանությունը։ Այդ կոչերը մոբիլիզացնում էին բանվորներին, գյուղացիներին, զինվորներին, համախմբում էին նրանց կոմունիստների շուրջը։

Ալեքսանդրոպոլում բոլշևիկների ղեկավարությամբ կազմակերպում են կառավարության տեղական օրգաններ՝ Գավառային կոմիսարիատ, Արտակարգ հանձնաժողով, Պարենավորման խորհուրդ, Ֆինանսների կոմիսարիատ, Ագիտացիոն բյուրո և այլն։ Քաղաքացիներին կենսամթերքով ապահովելու համար քաղաքի բանվորների միջոցով հաշվի են առնվում բոլոր մթերային կետերը և նշանակվում հուսալի պահակներ, գրավվում են ամերիկյան պահեստները, իսկ ամերիկացիների

[1] «Կոմունիստ» (Երևան), № 106, 1935։

վրա սահմանվում է խիստ հսկողություն։ «Ալեքսանդրոպոլում բոլշևիկները գրավում են նրանց (ամերիկացիների—Գ. Ղ.) պահեստները,— տագնապով հայտնում է գնդապետ Հասկելը Հայաստանի՝ Թիֆլիսում գտնվող ներկայացուցչին,— դրել են իրենց մարդկանց, իսկ ամերիկացիներին կարծես թե գերել են, ստիպելով կատարել իրենց հրամանները...»[1]։

Գավառի գյուղացիությունը, հետևելով բանվորների օրինակին, նույնպես ապստամբության դրոշ է բարձրացնում և քշելով գյուղերից դաշնակներին, իշխանությունը վերցնում է իր ձեռքը։ Սովետական իշխանության համար առանձնապես ուժեղ պայքար է մղվում Քյավթառուի շրջանում։ Ստանալով Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի հրահանգը, մայիսի 10-ին շրջանի գյուղացիները կոմունիստների ղեկավարությամբ ապստամբվում են և կազմում Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտե, որի մեջ մտնում էին Արշալույս Փանյանը (նախագահ), Նահապետ Կուրղինյանը և Աղասի Մովսիսյանը։

Քյավթառուի կոմունիստների ղեկավար Ա. Փանյանը ռևոլյուցիոն գործունեության հարուստ փորձ ուներ։ Նա սովորել էր Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում և դեռ ուսանողական նստարանից մասնակցել ռևոլյուցիոն շար-

[1] ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, գ. 530, թ. 53։

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՓԱՆՅԱՆ
(1892—1920)

ժամանակներին։ 1917—1918 թթ. Փանյանը պարտիական աշխատանք է կատարել Մոսկվայում, Թուրքեստանում, Թիֆլիսում։ 1919 թ. ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեն Փանյանին ուղարկել էր Հայաստան, որտեղ նա ակտիվ ռևոլյուցիոն գործունեություն էր ծավալում Ալեքսանդրապոլի գավառում։ Մայիսյան ապստամբության օրերին Փանյանի գլխավորությամբ Քյավթառլուի բոլշևիկները գյուղերում ստեղծում են զինված ջոկատներ, որոնք պաշտոնանկ են անում դաշնակներին և սկսում իրականացնել ռևոլյուցիոն միջոցառումներ։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Փոքր Պառնի գյուղի ապստամբության ղեկավար Ե. Գալոյանը. «Մայիսի 10-ին ինձ հրահանգվեց անմիջապես գնալ մեր գյուղը (Փ. Պարնի) և սկսել զինաթափումը՝ բոլոր աչքի ընկնող դաշնակների։ Ստացված զենքերը բաժանվեց անմիջապես չքավորներին ու կազմակերպության անդամներին. ամբողջ գիշերը սկսեցինք զինաթափումը, որը շարունակվեց մինչև հետևյալ օրը։ Զինված չքավորության հետ շրջելով գյուղում, հավաքեցինք բոլոր զենքերը. գյուղի գլավինը, որը դաշնակ մաուզերիստ էր, արդեն փախել էր գյուղից։ Գյուղի ամենամեծ շենքի ծայրին բարձրացրինք կարմիր դրոշակը, իսկ գյուղում եղած սերմացուի ֆոնդը, մոտ 400 փութ ալյուրը, բաժանեցինք չքավորությանը։ Զին-

ված ապստամբներին հավաքել էինք մի տեղ և ռազմական դրություն հայտարարել. հաճախ զինված խմբերով դուրս էինք գալիս դիմադրում գյուղի կամ շրջանի գյուղերի վրա հարձակվող դաշնակ հրոսակախմբերին»[1]։

Ալեքսանդրոպոլի հետ միաժամանակ ապստամբություն է բռնկվում Սարիղամիշում և Կարսում։

Դեռ ապրիլի վերջից Սարիղամիշում իշխանությունը փաստորեն գտնվում էր բանվորների և զինվորների ձեռքին։ Մայիսի 7-ին Սարիղամիշի պարտիական կազմակերպության ներկայացուցիչ Ա. Առաքելյանը մասնակցում է Ալեքսանդրոպոլում գումարված խորհրդակցությանը և առաջադրանք ստանում՝ քաղաքում ստեղծել Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտե ու նախապատրաստվել գրավելու իշխանությունը։ Մայիսի 9-ին բանվորների և զինվորների ներկայացուցիչների ժողովում ընտրվում է Սարիղամիշի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտե, որի մեջ մտնում են՝ Անդրանիկ Ճուղուրյանը (նախագահ), Լիպարիտ Մխչյանը, Կարո Կարապաշը, Պավել Կուխմալայկինը, Պյոտր Մատիչկոն, Ալեքսանդր Առաքելյանը։ Ժողովը միաժամանակ հաղորդակցության և կապի կոմիսար է

[1] ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարխիվ։

ընտրում Սամվել Ոսկանյանին, երկաթուղու կոմիսար՝ Պյոտր Մատիչկոյին։

Մայիսի 10-ին Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի ղեկավարությամբ սկսվում է Սարիղամիշի բանվորների և զինվորների զինված ապստամբությունը։ Ապստամբները դրավում են քաղաքային վարչության շենքը և հայտարարում Սովետական իշխանություն։ Դաշնակ գործիչները ձերբակալվում են և բանտարկվում։ Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն փորձեր է անում կապ հաստատելու Ալեքսանդրոպոլի և Կարսի ապստամբների հետ։

Մայիսի 7-ին Ալեքսանդրոպոլում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ Կարսում զինված ապստամբության նախապատրաստման և անցկացման պատասխանատվությունն ու ղեկավարությունը դրվում է Ղուկաս Ղուկասյանի վրա։ Մայիսի 8-ին նրա ղեկավարությամբ գումարվում է Կարսի պարտիական կազմակերպության ժողովը, որտեղ ընտրվում է Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտե և որոշվում սկսել զինված ապստամբությունը։ Այդ ժողովի մասին հին բոլշևիկ Լ. Ղազարյանն իր հուշերում գրել է. «Ուշ երեկոյան, Կարսի մի խուլ անկյունում, երկաթուղային դեպոյի բանվորի բնակարանում տեղի ունեցավ մեր պարտիայի քաղաքային ընդհատակյա կազմակերպության գաղտնի ժողովը։ Ժողովի էին եկել բանվորական

կազմակերպությունների և զորամասերի պարտիական բջիջների ներկայացուցիչները։ Այստեղ էին Ղուկաս Ղուկասյանը, Սաշա Նազարյանը, Դիմիտրի Մելիքյանը, Հովհաննես Մանուկյանը, Սուրեն Ծառուկյանը և ուրիշները։

Միջազգային և ներքին դրության մասին համառոտ հաղորդում է տալիս Ղուկաս Ղուկասյանը... Բանվորների և զինվորների տրամադրության մասին ընկերների կարճ հաղորդումներից հետո միաձայն որոշում է ընդունվում անհապաղ գրավել իշխանությունը»[1]։

Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի կազմում ընտրվում են՝ Ղ. Ղուկասյանը, Դ. Մելիքովը, Վ. Ղազանջյանը, Ա. Թովմասյանը, Ա. Նազարյանը և Բայթունին։

Մայիսի 9-ի առավոտյան Կարսի ամրոցների հրետանու համազարկերը ազդարարում են զինված ապստամբության սկիզբը։ Ապստամբների հիմնական ուժերն էին դարաժի ու երկաթուղու բանվորները և կայազորի զինվորները։ Շուտով ապստամբներին են միանում շրջանի նաև ռուս և հույն բնակիչները, որոնք կարմիր դրոշներով գալիս են ողջունելու նոր իշխանությունը։ Ապստամբները համառ կռիվներով գրավում են կայարանը, հեռագրատունը, փոստը և այլ հիմնարկներ։ Մի

[1] «Կոմունիստ», № 103, 1954, 1 մայիսի։

ՂՈՒԿԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆ
(1899—1920)

քանի օր շարունակ քաղաքում տեղի են ունենում համառ մարտեր ապստամբների և դաշնակցական զորքերի միջև։ Ապստամբության օրերին Կարսի բոլշևիկներին հաջողվում է կոմունիստ հեռագրիչ Հ. Օհանօղլյանի (այժմ գեներալ-մայոր) միջոցով օգտագործել հեռագրային ապարատը և կապ պահպանել Ալեքսանդրոպոլի բոլշևիկների հետ։

Մայիսի 13-ին զինված ապստամբություն է սկսվում Նոր Բայազետի գավառում։ Մայիսի 8-ին ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեն Հովհաննես Սարուխանյանին ուղարկել էր Նոր Բայազետի գավառը՝ ապստամբությունը կազմակերպելու և ղեկավարելու համար։

Հ. Սարուխանյանը հին և կոփված բոլշևիկ էր։ Պարտիայի հանձնարարականով նա ռևոլյուցիոն աշխատանք էր կատարել Թիֆլիսում, Նոր Բայազետում, Կարսում, Իգդիրում, Կաղզվանում։ Դեռևս 1904 թ. Սարուխանյանի ղեկավարությամբ Նոր Բայազետում հիմնադրվել էր բոլշևիկյան կազմակերպություն։ Հետագայում Սարուխանյանը բազմիցս եղել էր Նոր Բայազետում և անձնվեր ռևոլյուցիոներ Բատիկ Բատիկյանի հետ միասին մեծ դեր կատարել քաղաքի և գավառի պարտիական բջիջների ամրապնդման գործում։ Ո՛չ դաշնակների ու մենշևիկների կողմից գործադրված հալածանքները, ո՛չ բանտն ու աքսորը չընկճեցին Սա-

ռուխանյանի աննկուն կամքը։ Մայիսյան օրերին գալով Նոր Բայազետ, Սարուխանյանը, իր մարտական ընկերներ Բ. Բատիկյանի, կապիտան Պետրովի, Ս. Մակարյանի, Գ. Դաղիկյանի և մյուսների հետ միասին, գլխավորում է տեղի աշխատավորության ռևոլյուցիոն ելույթները։ Մայիսյան ապստամբությունը Նոր Բայազետում սկսվեց Ղարանլուղ (այժմ Մարտունի) գյուղից։ Ղարանլուղում Սարուխանյանը հրավիրում է կոմունիստների խորհրդակցություն և քննարկում զինված ապստամբություն կազմակերպելու հարցը։ Ստեղծվում է Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտե, որի ղեկավարությամբ Ղարանլուղի և Բասարգեչարի զինվորներն ու գյուղացիները ապստամբվում են, ձերբակալում դաշնակցական զորքերի շտաբի պետ գեներալ Սիլիկովին և շարժվում դեպի Նոր Բայազետ։ Ճանապարհին ապստամբներին են միանում Ներքին Ադյաման, Գյոլ, Դալիղարդաշ (այժմ Սարուխան) և մյուս գյուղերի գյուղացիները։ Մայիսի 17-ին ապստամբները մարտերով մտնում են Նոր Բայազետ և որոշում շարժվել դեպի Եկենովկա։

Դիլիջանի գավառում ապստամբությունն ըսկըսվում է մայիսի 14-ին՝ Շամշադինի ենթառայոնից։ Այստեղ ապստամբությանն ակտիվ մասնակցություն են ունենում նաև ադրբեջանական

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
(1882—1920)

գյուղացիները։ Միայն Ղազախ շրջանում ապըստամբությանը մասնակցեցին 4000 հայ և ադրբեջանական գյուղացիներ, որոնք զինված մարտեր էին մղում դաշնակների դեմ։

Շամշադինի գյուղացիները ողջունելով Սովետական Ռուսաստանին, Կարմիր Բանակին և ազատագրված հարևան Ադրբեջանի Սովետական ռեսպուբլիկային, որոշումներ են ընդունում իրենց մոտ ևս Սովետական իշխանություն հաստատելու մասին։ Նրանք կապվում են Կարմիր Բանակի զորամասերի հետ և օգնություն ստանում նրանցից։

Շամշադինի ապստամբների մի խումբը, մայիսի 17-ին գնում է Թոուզ կայարանը (Ադրբեջան), որտեղ կազմակերպվում է միտինգ՝ մասնակցությամբ տեղի բնակչության և Կարմիր Բանակի զորամասերի։ Միտինգից հետո հրավիրվում է խորհրդակցություն, որը որոշում է դելեգացիա ուղարկել Բաքու՝ Սովետական Ադրբեջանի Ռևկոմից օգնություն ստանալու համար։ Մայիսի 18-ին մեկնելով Բաքու, դելեգացիան լինում է Ռևկոմի նախագահ Նարիման Նարիմանովի մոտ։ Սովետական Ադրբեջանի կառավարությունը 17 վագոն սննդամթերք և 5 միլիոն ռուբլի դրամ է տալիս ապստամբներին օգնելու համար։

Մայիսի 19-ին ապստամբում են Քարվանսարայի (Իջևանի) շրջանի գյուղացիները, որոնք,

ձերբակալելով դաշնակցական պարագլուխներին, Բարվանսարայում հայտարարում են Սովետական իշխանություն։ Դիլիջանի գավառի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեին, որի մեջ մտնում էին կոմունիստներ Ենոք Մկրտումյանը, Շավարշ Ամիրխանյանը, Գարուստ Հարությունյանը, Անանիա Բերբերյանը և ուրիշներ, հաջողվում է կապվել Աղբրբեջանում՝ Հայաստանի սահմանին մոտ գտնվող Կարմիր Բանակի զորամասերի հետ (11-րդ Կարմիր Բանակի 32-րդ դիվիզիան) և ստանալ նրանց օգնությունը։

Ապստամբների խնդրանքով և Գ. Կ. Օրջոնիկիձեի կարգադրությամբ Կարմիր Բանակի մի քանի ջոկատներ մտնում են Հայաստան։ Նրանց օգնությամբ ապստամբները մայիսի 20-ին գրավում են Բարվանսարան (այժմ Իջևան), իսկ մայիսի 21-ին Դիլիջանը։ Ստեղծվում է տեղական Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտե, որը ձերբակալում է դաշնակցական գործիչներին (ներքին գործերի մինիստրի օգնական Մանասյանց, գեներալ Բաղդասարով և ուրիշներ) և փորձում խորացնել ձեռք բերված հաջողությունները։ Ապստամբների հարձակողական գործողությունները խուճապ են առաջացնում դաշնակների շարքերում։ «Բոլշևիկները գրավել են Դիլիջանը։ Դաշնակիցներից կատեգորիկ օգնություն պահանջեցեք»,— տագնապահար հե-

ԲԱՏԻԿ ԲԱՏԻԿՅԱՆ
(1892—1920)

ռագրում էին այդ օրերին դաշնակները՝ Վրաստանում գտնվող իրենց ներկայացուցիչներին[1]։

11-րդ Կարմիր Բանակի զորամասերը խոշոր օգնություն ցույց տվեցին Հայաստանի ապստամբ աշխատավորությանը, սակայն նրանք ստիպված էին շուտով վերադառնալ Ադրբեջան, որովհետև այնտեղ՝ Գյանջայի շրջանում, ամերիկա-անգլիական և ֆրանսիական իմպերիալիստների թելադրանքով, մուսավաթականները կոնտրռևոլյուցիոն խռովություն էին բարձրացրել և սպառնում էին Սովետական իշխանությանը։

Մայիսյան ապստամբության ալիքը տարածվում է նաև Զանգեզուրում՝ Գորիսի, Սիսիանի, Դափանի, Մեղրու շրջաններում։ Զանգեզուրի բանվորները և գյուղացիները ռևոլյուցիոն պայքարի հարուստ փորձ ունեին։ Նրանցից շատերը երկար տարիներ աշխատելով Բաքվում՝ պրոլետարական այդ կենտրոնում, անցել էին ռևոլյուցիոն պայքարի հիանալի դպրոց և վերադառնալով Զանգեզուր, տեղի աշխատավորության մեջ տարածում էին Բաքվի պրոլետարիատի լավագույն տրադիցիաները, Սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի փորձը։ 1918—1920 թվականներին Զանգեզուրի ընդհատակյա պարտիական կազմակերպությունները, ականա-

1 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 68/200, գ. 764, թ. 189։

վոր բոլշևիկներ Բագրատ Հարությունյանի, Խրիստափոր Մկրտչյանի, Մակիչ Մաշուրյանի և Հակոբ Կամարու ղեկավարությամբ, մեծ աշխատանք էին ծավալում բանվորների, գյուղացիների և զինվորների մեջ՝ համախմբելով նրանց Կոմունիստական պարտիայի շուրջը։

Զանգեզուրի աշխատավորությունը, կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ հերոսական պայքար մղելով դաշնակների դեմ, անհամբեր սպասում էր Կարմիր Բանակի փրկարար օգնությանը, որը 1920 թ. կեսերին ազատագրելով Ղարաբաղը դաշնակցական և մուսավաթական հրոսակախմբերից մոտենում էր Զանգեզուրի սահմաններին։

«Զանգեզուրի գյուղացիությունն անհամբեր սպասում էր Կարմիր Բանակի գալուն,—գրում էր Բաքվում լույս տեսնող «Կոմունիստ» թերթը,— Խնձորեսկ գյուղը, երբ իմանում է, որ կարմիր զորքը մտել է Շուշի, դուրս է գալիս կարմիր դրոշակներով, բայց կառավարական զորքը վրա է հասնում՝ ցրում բոլորին... Զանգեզուրի գյուղացիությունը սպասում է կարմիրների գալուն, որ փրկեն նրանց դաշնակցականների ձեռքից»[1]։

Ոգևորված Կարմիր Բանակի հաղթանակներով, մայիսի 15—20-ին, կոմունիստների ղեկավարու-

[1] «Կոմունիստ», № 48, 1920, 15 հուլիսի։

թյամբ, ապստամբվում են Սիսիանի շրջանի Բռնակոթ, Շաղաթ, Բոլակ, Ախլաթյան և մյուս գյուղերի գյուղացիները։ Մայիսի 21-ին ապստամբություն է սկսվում Խնձորեսկի ենթաշրջանում։ Կազմակերպվում է Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտե, որի մեջ մտնում են Հակոբ Կամարին, Խրիստափոր Մկրտչյանը, Իսկանդար Էքտիբարյանը, Թովմաս Ադոնցը, Հակոբ Տանինը և ուրիշներ։ Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն շրջանում հայտարարում է Սովետական իշխանություն, բանտարկում դաշնակցական տեղական պաշտոնյաներին, գրավում ռազմամթերքի պահեստները և զինում գյուղացիներին։ Պարտիայի Գավառային Կոմիտեն դիմում է Զանգեզուրի բոլոր գյուղերին՝ միանալու ապստամբությանը։ Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն կապեր է հաստատում Ղարաբաղի և Կարմիր Բանակի զորամասերի հետ։

Մայիսի 27-ին Հակոբ Կամարին ՌԿ(բ)Պ Զանգեզուրի Կենտրոնական Կոմիտեի անունից դիմում է Սիսիանի պարտիական կազմակերպություններին՝ օգնության գալ Գորիսի ապստամբներին, ջախջախելու Դրոյի և Նժդեհի հրոսակախմբերին, որոնք ցանկանում էին արյան մեջ խեղդել Զանգեզուրի ապստամբությունը։ «Ժողովրդական ապստամբությունը Զանգեզուրում, Խնձորեսկում և նրա շրջակա գյուղերում արդեն սկսված է,—գրում

է Հ. Կամարին,—շարժումն ուղղված է Ղարաբաղից դարձող հրոսակապետներ Դրոյի և Նժդեհի բանակների դեմ... Ապստամբությունն ընդհանուր դարձնելու համար Սիսիանի բոլոր ընկերները և ամբողջ մասսաները պետք է ապստամբության դրոշ պարզեն և պատկառելի ուժով շարժվեն դեպի Գորիս մեզ օգնության հասնելու...»[1]:

Մայիսի 27-ին ապստամբները գրավում են դաշնակցական զորքերի շտաբը, ձերբակալում նրա պետին և պահանջում Դրոյից հանձնվել: Կատաղի մարտեր են մղվում թշնամու գերակշռող ուժերի դեմ:

* * *

Դաշնակցական կառավարությունը, ամերիկա-անգլիական իմպերիալիստների օգնությամբ, դիմեց բոլոր միջոցներին՝ Հայաստանի բանվորների և գյուղացիների հերոսական ապստամբությունը արյան մեջ խեղդելու համար: Այդ միջոցառումների մասին դաշնակները շտապում են հայտնել Հասկելին, որը պահանջում էր Հայաստանում «կատարյալ խաղաղություն հաստատել», հակա-

[1] ՄԵԱՄԻ-ի Հայկական ֆիլիալի պարտաբերթի, ֆ. 23, գ. 9, թ. 1:

ռակ դեպքում սպառնալով զրկել նրանց Ամերիկայի «բարձր հովանավորությունից»։

«Պառլամենտն իրեն արձակել է մեկ ամիս ժամանակով,—հեռագրում է մայիսի 13-ին դաշնակ պարագլուխ Օհանջանյանը Թիֆլիս՝ Հայաստանի դիվանագիտական միսիային,— բոլոր լիազորությունները հանձնել է կառավարությանը, հանձնարարելով ձեռք առնել արագ վճռական միջոցներ՝ ճնշելու Ալեքսանդրի բունկումը։ Պառլամենտի անդամները ցրվել են երկրով մեկ։ Կառավարությունը ձեռնարկել է և այլ բնույթի մի շարք միջոցներ՝ բոլշևիկների գործունեությունը դադարեցնելու համար։

Կառավարության դեմ ապստամբների նկատմամբ ընդունված է մահապատժի օրենք։ Ալեքսանդրոպոլ է ուղարկված ուժեղ պատժիչ ջոկատ... այդ մասին զեկուցեցեք բոլոր դաշնակիցներին և վրացական կառավարությանը և կատեգորիկ կերպով հայտարարեցեք կառավարության անշեղ վճռականության մասին՝ բոլոր ուժերով և չթուլացող եռանդով թույլ չտալ բոլշևիկյան շարժումները»[1]։

Ամերիկյան իմպերիալիստները, Անտանտայի դրածո, սպիտակ գեներալ Վրանգելը, վրաց մենշևիկները, գազանային ատելությամբ լցված դեպի

[1] ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 68/200, գ. 770. թ. 1։

Հայաստանի ռևոլյուցիոն մասսաները, օգնեցին դաշնակներին արյան մեջ խեղդելու Մայիսյան ապստամբությունը։ Նրանք արգելեցին պարենամթերք ուղարկել Հայաստան, դրա փոխարեն նրանք հրացաններ ու գնդացիրներ ուղարկեցին դաշնակներին։

Ապստամբությունը ճնշելու համար իրենց ուժերը մոբիլիզացրին և դաշնակներին ամեն ինչով օգնեցին Հայաստանի բոլոր կոնտրռևոլյուցիոն պարտիաներն ու կազմակերպությունները՝ կադետները, սպեցիֆիկները, էսեռները, մենշևիկները, ռամկավարները, ինչպես նաև հոգևորականությունը։ Ամերիկյան իմպերիալիստների ղեկավարությամբ ապստամբների դեմ նրանք կազմեցին «միասնական ճակատ»։

Դաշնակցական կառավարությունն իր ուժերն առաջին հերթին ուղղեց ապստամբության կենտրոնի՝ Ալեքսանդրոպոլի դեմ։

Դաշնակցական զորքերը Ալեքսանդրոպոլ էին շարժվում երկու ուղղությամբ։ Հիմնական հարվածը հասցվելու էր հարավից՝ Երևանից Անիի վրայով, օժանդակ հարված էր պատրաստվում հյուսիսից՝ Ջաջուռի կողմից։ Դաշնակցական զորքերի հրամանատարն էր Սեպուհը։ Նրա ջոկատը բաղկացած էր մոտ վեց հարյուր հեծյալից, Երևանի 8-րդ գնդի մեկ դումարտակից և վեց թնդա-

նոթից։ Սեպուհին օգնում էին նաև մի քանի խմբ-բապետներ՝ մատուզերիստների փոքրիկ խմբերով։ Այսպիսով, հակառակորդի ուժերը 1.000 հոգուց քիչ ավելի էին։ Մինչդեռ ապստամբներն իրենց տրամադրության տակ ունեին երկու հեծյալ գունդ, զրահագնացք, վեց վաշտ հետևակ՝ լրիվ կազմով, 12 գնդացիր, 8 թնդանոթ և մոտ 600 հոգուց բաղկացած բանվորական Կարմիր գվարդիա։

Քանակական գերակշռության հետ միասին, ապստամբների կողմն էր նաև բարոյական գերակշռությունը։ Սեպուհի ջոկատը մարտունակ չէր, նա կռվում էր դաշնակցական-նացիոնալիստական ստահոդ ագիտացիայի ազդեցության տակ։ Էլ ավելի անմխիթարական էր դրությունը կանոնավոր զորքերի ստորաբաժանումներում։ Նրանց մեջ Երևանի բոլշևիկները ագիտացիոն աշխատանք էին տարել և զինվորների մի մասը պատրաստ էր ապստամբների կողմն անցնել[1]։

Բոլորովին այլ էր ապստամբ ուժերի վիճակը։ Ալեքսանդրոպոլի կայազորի գրեթե բոլոր զինվորները բոլշևիկների կողմն էին։ Այս չէր ժխտում նույնիսկ դաշնակցական բանակի հրամանատարությունը. «...Ալեքսանդրոպոլի ամբողջ կայա-

[1] ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտաբերիվ, ֆ. 33, տես ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի զեկուցումը ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեին։

զորը խռովարարների կողմն է...»[1]—ասված էր Կարսի և Ալեքսանդրոպոլի կայազորներում մայիսմեկյան օրերին տեղի ունեցած դեպքերի մասին կառավարությանը տրված ռազմական տեսության մեջ։ Սպայությունն իր ճնշող մեծամասնությամբ, դժգոհ դաշնակցական ռեժիմից և ատելությամբ լցված դեպի խմբապետների ստորացուցիչ կամայականությունները, միացել էր ապըստամբներին, կամ տատանվում էր (մայիսի 9-ին Ալեքսանդրոպոլի կայազորի սպաների ժողովը որոշում է անցնել Սովետական իշխանության կողմը)։ Բանվորական Կարմիր գվարդիան, որը գործում էր բոլշևիկների անմիջական ղեկավարությամբ, բոլորին վարակում էր իր նվիրվածությամբ ապստամբության գործին։

Ուժերի այսպիսի հարաբերակցությամբ առաջիկա մարտերում ապստամբները կհաղթեին, եթե նրանք ունենային հմուտ ղեկավարություն։ Այս են ապացուցում Ալեքսանդրոպոլում Մայիսյան ապստամբության մասին բոլոր նյութերը։

Սակայն այն ժամանակ, երբ Ալեքսանդրոպոլի բանվորներն ու զինվորները բոլշևիկների ղեկավարությամբ պատրաստվում էին վճռական մարտերի, Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն թույլ է տալիս լուրջ սխալ։

[1] ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 68/200, գ. 772, թ. 7։

Մայիսի 13-ին, երեկոյան ժամը 8-ին կայանում, զրահագնացքում տեղի է ունենում Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի նիստը, որին բացի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի անդամներից մասնակցում էին նաև պարտիական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Նիստում քննարկվում է քաղաքը հանձնելու մասին Սեպուհի ուլտիմատումը։ Այդ մասին Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի անունից զեկուցում է Ս. Մուսայելյանը։ Ելույթներից հետո ընդունվում է հետևյալ որոշումը. «Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի նիստը՝ պատասխանատու պարտիական ընկերների հետ միասին լսելով ընկ. Մուսայելյանի զեկուցումը ռազմաճակատի դրության և Սեպուհի ուլտիմատումի մասին, այդ ուլտիմատումը համարում է անընդունելի և առաջարկում է Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեին շտապ կերպով կազմակերպել քաղաքի պաշտպանությունը»[1]։

Սակայն մեկ ժամ հետո, ինչպես ասված է այս նիստի արձանագրության մեջ, Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն որոշում է «քաղաքը հանձնել առանց մարտի»[2]։

Ալեքսանդրոպոլի պաշտպանությունը կազմա-

---

[1] ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, հատուկ ֆոնդ։

[2] Նույն տեղը։

կերպելու վճռական մոմենտին Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն իր դիրքում չգտնվեց և չկարողացավ գլխավորել ապստամբների ռևոլյուցիոն խանդավառությունը։

Մայիսի 14-ին Սեպուհի բանդաները մտնում են Ալեքսանդրոպոլ։ Սկսվում է դաժան հաշվեհարդարը ապստամբների հետ։ Դաշնակցական զորքերի կողմից Ալեքսանդրոպոլը գրավելուց անմիջապես հետո ձերբակալվում, բանտարկվում և գնդակահարվում են ապստամբության տասնյակ ու հարյուրավոր ղեկավարներ ու մասնակիցներ։ «Ալեքսանդրոպոլն առնելուց հետո առաջին օրն եղեթ,—ասված է ՌԿ(բ)Պ Երևանի քաղաքային կոմիտեի տեղեկանքներում՝ Ալեքսանդրոպոլի ապըստամբության հնշման մասին,—սկսվեց կոմունիստների հետ հաշվեհարդարը։ Կառավարական կուսակցության գաղանացած ագենտները, մինչև ատամները զինված սպեկուլյանտների հետ, Երևանի կողակներն ու մնացած դաշնակցական ոհմակը՝ մանր-բուրժուական ազգայնական խմբակներին հատուկ պրովակացիայի օգնությամբ մտան քաղաք... Բուրժուազիան արյուն էր պահանջում ու բանվորների ու կոմունիստների արյունը առատորեն հոսում էր Ալեքսանդրոպոլի փողոցներում։ Կոմունիստական երիտասարդությունը առանց դատի ու առանց քննության գնդակահար-

վում էր փողոցներում և նրբանցքներում, իսկ պարագլուխների հասցեին լուտանքներ էին թափում նրանք, որոնք մի քանի օրվա միջոցին զրկվել էին իշխանությունից և արտոնություններից... այդպես կոտորվեցին գնդակահարություններից 50-ից 100 ընկեր, ձերբակալվել են 100 ընկեր... Բանվորական կազմակերպությունները կատարյալ ավերածության ենթարկվեցին...»[1]:

Մայիսի կեսերին ձերբակալվում և բանտարկվում են ՌԿ(բ)Պ Ալեքսանդրոպոլի Կոմիտեի անդամներ Բ. Ղարիբջանյանը, Ե. Սևյանը, ապբստամբների խիզախ հրամանատար Ս. Մուսայելյանը, ապստամբության ակտիվ մասնակիցներ Ա. Շավտյանը, Ռ. Սաֆարյանը, Ս. Գալոյանը, Գր. Ջրաղացպանյանը, Ա. Աղամալյանը, Մ. Գաբագաշը, Հ. Հովակիմյանը, Ա. Ղարիբջանյանը և ուրիշները:

Ապստամբության այսպիսի ընթացքն Ալեքսանդրոպոլում, որտեղ գտնվում էին Հայաստանի Ռազմա-հեղափոխական Կոմիտեն և խոշոր զինված ուժեր, վճռական նշանակություն ունեցավ մյուս շրջանների ապստամբական շարժումների համար:

Մայիսի 13-ին համառ մարտերից հետո ճընշվում է ապստամբությունը Կարսում: Ապստամբ-

[1] ՄԵԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտաբերիվ, գ. 30, դ. 6, թ. 93:

ների Կենտրոնական հենակետերից մեկը՝ «Ալեքսանդր II» ֆորտը գրավելու համար դաշնակները դիմում են ամենանենգ ու դաժան միջոցների։ Ֆորտի վրա գրոհ կազմակերպելիս նրանք ստիպում են իրենց առջևից գնալու որբանոցների երեխաներին և քաղաքի խաղաղ բնակիչներին։ Կարսի ապստամբները հերոսաբար կռվելով դաշնակցական բանդաների դեմ, օգնություն էին սպասում Ալեքսանդրոպոլից և Սարիղամիշից, բայց այդ օգնությունը չեկավ։ Ապստամբների մի խումբ Ղ. Ղուկասյանի ղեկավարությամբ փորձում է ճեղքել թշնամու օղակը և անցնել Ալեքսանդրոպոլ, բայց ճանապարհին՝ Արգինա ձորում, ջրաղացների մոտ, շրջապատվում է դաշնակների կողմից։ Տեղի ունեցած անհավասար մարտում ապըստամբները հերոսաբար պաշտպանվում են։ Սակայն արյունռուշտ դաշնակներին հաջողվում է ճընշել նրանց դիմադրությունը և գազանաբար սպանել մինչև վերջին շունչը հերոսաբար մարտնչող կոմունիստներ Ղուկաս Ղուկասյանին, Պետյա Ցավրակովին, Խրիստոֆսկուն, Սուրեն Ծառուկյանին, Քերոբ Խաչատրյանին, Հովհաննես Մանուկյանին, Գուրգեն Դուզճակատյանին և երկու զինվորի, որոնց անուններն անհայտ են։ Ապստամբների մի մասին հաջողվում է ազատվել, իսկ մյուսները ձերբակալվում են և ենթարկվում դաժան խոշտան-

գումների։ Կարսի բանտում գազանաբար գնդակահարվում են խիզախ ռևոլյուցիոներներ՝ Վասիլ Ռադինովը, Գուրգեն Տեր-Գրիգորյանը, Գինոս Մկրտչյանը, Մկրտիչ Խաչատրյանը։

Մայիսի 18-ին ապստամբությունը ճնշվում է Սարիղամիշում։ Դաշնակ մատուզերիստները ձերբակալում և Կարսի լճում խեղդամահ են անում ապստամբության ղեկավարներ Անդրանիկ Ճուղասյանին (Ադոկ), Պավել Կուխմալայկինին, Սամվել Ոսկանյանին, Պյոտր Մատիչկոյին։ Ապըստամբության տասնյակ մասնակիցներ գազանաբար սպանվում են։

Դաշնակցական ճիվաղները խոշոր ուժեր են կենտրոնացնում նաև Նոր Բայազետի ապստամբների դեմ։ Մայիսի 19-ին, համառ մարտերից հետո, նրանց հաջողվում է վերցնել քաղաքը։ «...Համառ դիմադրությունից հետո Նոր Բայազետը հանձնվեց,—ասված է ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի՝ Կովկասյան Երկրային Կոմիտեին ուղարկված զեկուցագրում,— ապստամբների մի մասը քաշվեց սարերը, մի մասը ձերբակալվեց և նրանցից մի քանիսը, ընկ. Սարուխանյանի գլխավորությամբ, գնդակահարվեցին։ Սարսափելի կերպով վարվեցին ընկ. Սարուխանյանի հետ, ուղղակի ինկվիզիտորների նման։ Այսպես, օրինակ, երկու ձիավոր նրա երկու ձեռքից բռնած և ձիերը քշելով

քարշ էին տալիս նրան քաղաքի միջով։ Մեր ընկերները տեսել են նրան ֆուրգոնի մեջ պառկած, ուշաթափ վիճակում»[1]։

Անձնվեր ռևոլյուցիոներ Հովհաննես Սարուխանյանը մահվանից առաջ խիզախորեն բացագանչում է. «Կճոճվենք կախաղանի վրա, բայց ռևոլյուցիայի գործին չենք դավաճանի»[2]։

Բայազետում ապստամբությունը ճնշելուց հետո Սեպուհի հրոսակախմբերը շարժվում են Դիլիջանի գավառի ապստամբների դեմ և մայիսի 25-ին գրավում Դիլիջանն ու Իջևանը։ Այդ շրջաններում ապստամբության ղեկավարներ ու ակտիվ մասնակիցներ Ենոք Մկրտումյանը, Սեդրակ Հակոբջանյանը, Վասիլի Ալեքսեևը, Վաղինակ Հովսեփյանը, Ապոստոլովը և ուրիշներ գնդակահարվում են։ Մարտերի ժամանակ Ե. Մկրտումյանը ծանր վիրավորվում է երկու տաքից, աջ ուսից և բազուկից։ Այսպիսի վիճակում դաշնակները նրան ձերբակալում են, բանտարկում և ենթարկում սոսկալի տանջանքների։ Սակայն ընկճել խիզախ ռևոլյուցիոներին նրանց չի հաջողվում։ «Այս 11 օր է, որ բոպե բոպե սպասում եմ գնդակահարման,— գրել է Ե. Մկրտումյանը 1920 թ. հունիսին, գնդակահարությունից առաջ,—պատկերանում եմիմ ամ-

[1] ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 33։
[2] Նույն տեղը, Հ. Սարուխանյանի ֆոնդ։



ԵՆՈՔ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
(1896—1920)

բողջ կյանքն ու վերջին գործունեությունը իմ առաջ, բայց և ոչ մի վայրկյան մինչև այժմ ղղջումը կամ սարսափը մտքովս չի անցել, հանգիստ եմ միանգամայն, հանգիստ հոգով էլ սպասում եմ դատավճռի»[1]։

* * *

Դաշնակցական կառավարությունը, բարբարոսաբար ճնշելով Հայաստանի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժումը, սկսեց ուժեղ թափով ջախջախել կոմունիստական կազմակերպությունները, ձերբակալել ու գնդակահարել կոմունիստներին։ Բանտերը լցվեցին ռևոլյուցիոներներով, որոնք ենթարկվում էին դաժան խոշտանգումների ու տանջանքների։ Երևանի, Ալեքսանդրոպոլի, Կարսի, Դիլիջանի, Նոր Բայազետի և այլ բանտերում, Սևանա կղզում գտնվում էին 500-ից ավելի կոմունիստներ և անպարտիական ռևոլյուցիոներներ[2]։ Հարյուրավոր կոմունիստներ գնդակահարվեցին։

---

[1] ՄԷՀՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարիվ, ենոք Մկրտումյանի ֆոնդ։

[2] Դրանց թվումն էին Ս. Մարտիկյանը, Ա. Խանջյանը, Ա. Բուդաղյանը, Լ. Մխչյանը, Ն. Կուրդինյանը, Հ. Զարգարյանը, Ս. Հակոբյանը (Դորա), Հ. Ազիզյանը, Ա. Մուրադյանը, Մ. Աղայանը, Բ. Ներսիսյանը, Ա. Ղա-

1920 թվականի հունիս—հոկտեմբեր ամիսներին դաշնակները գաղանաբար զնդակահարեցին Հայաստանի պարտիական կազմակերպությունների ակտիվ գործիչներ, խիզախ ռևոլյուցիոներներ՝ Ստեփան Ալավերդյանին, Բագրատ Ղարիբջանյանին, Սարգիս Մուսայելյանին, Եգոր Սևյանին, Արշալույս Փանյանին, Խրիստափոր Մկրտչյանին, Մկրտիչ Մաշուրյանին, Բագրատ Հարությունյանին, Բատիկ Բատիկյանին, Գրիգոր Դադիկյանին, Կապիտան Պետրովին, Արտաշես Մելքոնյանին, Գարեգին Հարությունյանին, Լևոն Հովհաննիսյանին, Ավետիք Գուլոյանին (Սեյրի), Վարդան Գևորգյանին, Արմենակ Գալստյանին և շատ ուրիշների։

Դաշնակցական դատարանում և զնդակահարությունից առաջ կոմունիստները ամենայն հպարտությամբ պաշտպանում էին իրենց համոզմունքները, մերկացնում օտարերկրյա իմպերիալիստների ձեռքին խաղալիք դարձած դաշնակների կործանարար քաղաքականությունը։ Նրանք բացահայտ կերպով հայտարարում են իրենց խոր հավատն այն մասին, որ Կոմունիստական պարտիան, Սովետական Ռուսաստանը շուտով հայ

բաղույանը, Պ. Պետրոսյանը, Ս. Մարտիրոսյանը, Ս. Միքայելյանը, Հ. Բատիկյանը, Գ. Զանոյանը, Հ. Ղամարյանը, Մ. Մխիկյանը, Մ. Պետրոսյանը, Վ. Մխիթարյանը, Գ. Վարդանյանը և ուրիշներ։



ՎԱՍԻԼԻ ԱԼԵՔՍԵՅԵՎ
(1896—1920)

ժողովրդին կփրկեն դաշնակների ստեղծած դժոխային դրությունից։

Գնդակահարությունից առաջ Ե. Սևյանն ասել է. «Ոչինչ, մենք կմեռնենք, բայց այն գործը, որի համար մենք մեռնում ենք՝ շուտով կհաղթանակի»։

Երևանի բանտից գնդակահարության տանելիս՝ Ս. Ալավերդյանը հայտարարել է. «Լավ հիշեցեք, ռևոլյուցիայի գործը չի մեռնի։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները տեր կդառնան իշխանությանը... Կե՞ցցե Հայաստանի Կոմունիստական պարտիան»։

Ս. Մուսայելյանը երկու ձեռքով բաց անելով կուրծքը, դահիճներին է դիմել հետևյալ խոսքերով. «Ես մահից վախեցող չեմ, սպանեցեք ինձ հենց այստեղ, բայց դուք չեք կարող խափանել անխուսափելին, այն որ Հայաստանն ազատ կլինի և մեր գործը չի մեռնի»։

Բ. Ղարիբջանյանն ասել է. «Հայաստանի հողը մեր արյունով կներկվի և կդառնա կարմիր։ Մի մոռանաք իմ խոսքերը—Հայաստանը սովետական կդառնա։ Կե՞ցցե Սովետական Հայաստանը»[1]։

Մինչև գնդակահարության տանելը՝ Ալավերդյանին, Մուսայելյանին և Ղարիբջանյանին հաջողվում է մի նամակ ուղարկել իրենց կոմունիստ ընկերներին։ Նամակում ասված է. «Մենք ղդում

[1] «Բանվոր» (Լենինական), № 255, 1931։

ենք, որ մեզ տանում են գնդակահարության։ Համոզված եղեք, որ մենք համարձակ և անվախ նայում ենք մահվան երեսին։ Մենք մեզ բախտավոր ենք համարում, որ նահատակ ենք լինում հանուն կոմունիստական ռևոլյուցիայի։ Թող մեր մահը ձեր ուժերը եռապատկի, ոչ մի թուլամորթության տեղիք չտաք։ Մենք համոզված ենք և դրանով բախտավոր, որ... կոմունիստական ռևոլյուցիայի ձայնը ո՛չ միայն չի լռի, այլ ավելի և ավելի կուժեղանա։

Ուրեմն, թանկագին ընկերներ, մնաք բարև, շարունակեցեք ձեր գրոհը ընդդեմ կապիտալիստական աշխարհի»[1]։

Զանգեզուրի բոլշևիկների խիզախ ղեկավար Բագրատ Հարությունյանը սպանությունից առաջ հայտարարում է. «բոլշևիկները մահից երբեք չեն վախենում. վերջին անգամ եմ հայտարարում, Զանգեզուրը էլի կլինի կարմիր ու խորհրդային, բայց մի մոռանաք դաշնակներ, որ կգա մի օր, երբ Ռուսաստանի մեծ պրոլետարիատը ձեզանից հաշիվ կպահանջի այդ անտեղի զոհերի համար, իսկ մենք ձեր ձեռքով ոչ թե մահանում ենք, այլ

[1] ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պաբտարխիվ, հատուկ ֆոնդ։



ԲԱԳՐԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(1894—1920)

անմահանում։ Հայտարարում եմ, որ ես եղել եմ բոլշևիկ, մեռնում եմ բոլշևիկ»[1]։

Հայ ժողովրդի ազատագրության համար պայքարող խիզախ մարտիկների նկատմամբ դաշնակների բարբարոսությունները բուռն զայրույթ առաջացրին Սովետական Ռուսաստանի և ամբողջ Անդրկովկասի աշխատավորական լայն մասսաների մեջ։

Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեն, ՌՍՖՍՌ-ի կառավարությունը, ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոն, Ադրբեջանի Սովետական կառավարությունը, բոլշևիկյան կազմակերպություններն ու պրոֆմիությունները պահանջում էին դաշնակներից դադարեցնել կոմունիստների գնդակահարությունները, ազատել ձերբակալվածներին։

1920 թ. հուլիսի 19-ից օգոստոսի 7-ը Մոսկվայում տեղի էր ունենում Կոմունիստական Ինտերնացիոնալի 2-րդ կոնգրեսը։ ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի առաջարկով կոնգրեսի դելեգատները ծանոթանում են Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների դելեգացիայի զեկուցմանը՝ Հայաստանում ռևոլյուցիոն շարժումների և պարտիական աշխատանքի վիճակի մա-

[1] ՄԷԿՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարեթվ, ֆ. 26, գ. 8, թ. 12։

սին։ Զեկուցմանը կցված էին Հայաստանում Մայիսյան ապստամբությունը դաշնակների կողմից գաղանաբար ճնշելու մասին փաստաթղթեր, որոնք հավաքել էր պարտիայի Երևանի քաղաքային կոմիտեն 1920 թ. մայիսի 23-ին։ «Հայաստանի Կոմունիստական կազմակերպությունների դելեգացիան,—ասված է զեկուցման մեջ,— զեկուցում է ներկայացնում 3-րդ Ինտերնացիոնալի կոնգրեսին Հայաստանում կոմունիստական շարժման մասին, հարյուրավոր լավագույն կոմունիստների գնդակահարության մասին, ձերբակալված և Հայաստանի բանտերում տանջվող հարյուրավոր գյուղացիների և բանվորների մասին, և հավատացած է, որ Գործկոմը բոլոր միջոցները ձեռք կառնի, որպեսզի վերջ դնի Հայաստանի կառավարության գաղանային բնաջնջներին»[1]։

«Կոմունիստական Ինտերնացիոնալի երկրորդ կոնգրեսի օրերին էր, որ մենք Մոսկվայում լուր ստացանք ապստամբության մասին,— հիշում է Կոմինտերնի 2-րդ կոնգրեսի դելեգատ Ա. Ֆ. Մյասնիկյանը,—մեր ընկերների կարծիքն այն էր, որ... Հայաստանում ստեղծված է այնպիսի դժոխային դրություն, որից աշխատավորությունը տուզում է դուրս գալ»[2]։

---

[1] Տե՛ս ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆելիալի պարտարեխիվ։

[2] «Կոմունիստ», № 82, 1921, 13 մայիսի։

1920 թվականի օգոստոսի 26-ին Սովետական Ռուսաստանի կառավարությունը դաշնակցական կառավարությանն ուղղած նոտայում գրել է. «Սովետական կառավարությունը նորից տեղեկություններ է ստացել Հայաստանում կոմունիստների շղթադրող գնդակահարությունների մասին... Սովետական կառավարությունը կարծում է, որ Հայաստանի ռեսպուբլիկական կառավարությունը պետք է վճռական միջոցներ ձեռնարկի վերջին ժամանակներս տեղի ունեցող արյունոտ ռեպրեսիաներն ու ինքնադատաստանները դադարեցնելու և Հայաստանի ու Սովետական Ռուսաստանի ժողովուրդների խաղաղ համագործակցությունը ծանր փորձությունների չենթարկելու համար։ Եթե հետագայում վերջ չտրվի Հայաստանում կոմունիստների արյունոտ հետապնդումներին, Սովետական կառավարությունը հարկադրված կլինի նույնանման միջոցների դիմելու այն հայկական քաղաքական գործիչների նկատմամբ, որոնք կհայտնաբերվեն Ռուսաստանի Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայի տերիտորիայում»[1]։

Հայաստանի աշխատավորությանը՝ Սովետական իշխանության համար մղված պայքարում

---

1 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 68/200, գ. 769բ, թ. 464։

մեծ օգնություն է կազմակերպում Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ակնավոր գործիչ Ս. Մ. Կիրովը, որը 1920 թվականի ամռանը ՌՍՖՍՌ լիազոր ներկայացուցիչն էր մենշևիկյան Վրաստանում և գտնվում էր Թիֆլիսում։

Ս. Մ. Կիրովի վճռական պահանջներով, հարյուրավոր բանվորներ և աշխատավորներ ազատվում են դաշնակցական դժոխքից և անցնում Սովետական Ադրբեջան, որտեղ նրանք ջերմ ընդունելություն են գտնում։

Դաշնակների գազանությունների դեմ իր բողոքի ձայնն է բարձրացնում Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն, որը ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի ներկայացուցիչների հետ միասին 1920 թվականի հունիսին, դաշնակցական կառավարության պրեմյեր մինիստրին ներկայացնում է հետևյալ նոտան. «Ադրբեջանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեին և Խորհրդային Ադրբեջանում գտնվող Ռուսաստանի կարմիր զորքերին հայտնի է, որ ձեր կառավարությունը Հայաստանում այժմ խեղդում է բանվորների և գյուղացիների շարժումը... Հենվելով մաուզերիստների գլխավոր դահիճ Սեպուհի և դենիկինյան սպաների վրա, դուք Հայաստանի գյուղացիներին և բանվորներին օրենքից դուրս եք հայտարարել։ Մասսայական գնդա-

կահարությունները Ալեքսանդրոպոլում, Կարսում, Սարիղամիշում և այլ վայրերում, հեղափոխական բանվորներին, գյուղացիներին և նրանց ղեկավարներին անխնա ձերբակալելը, ծեծելը, թալանելը,— այս բոլորը վրդովում է Ադրբեջանի պրոլետարիատի և Խորհրդային Ռուսաստանի կարմիր զորքերի հեղափոխական խիղճը։

Հայաստանի և Ղազախի գյուղացիներն իրենց ընտանիքներով փախչում են ձեր բաշիբոզուկների ձեռքից, ինչպես փախչում էին մուսավաթիստների ձեռքից, և ապաստան են գտնում Խորհրդային Ադրբեջանի հեղափոխական գյուղացիների մոտ։ Դա ամենալավ ապացույցն է, որ մուսավաթիստները ձեր գաղափարական եղբայրներն են ու զինակիցները և որ Հայաստանի գյուղացիներն ու բանվորները համերաշխ են Ադրբեջանի աշխատավորների հետ՝ դաշնակների և մուսավաթիստների դեմ կռվելու գործում։

...Առաջարկում ենք դադարել մեր ընկերներին ձերբակալել ու գնդակահարել, ազատել բոլոր ձերբակալվածներին և այդ մասին հայտնել մեզ...»[1]։

Սովետական Ադրբեջանի աշխատավորությունը սիրով ընդունում և ապաստան է տալիս դաշնակների հալածանքներից փախած հազարավոր բանվորների ու գյուղացիների։ Ադրբեջանական ժո-

[1] «Կոմունիստ» (Բաքու), № 28, 1920, 20 հունիսի։

ղովուրդը փրկում է իր հայ եղբայրներից շատերի կյանքը։

Դաշնակների սպիտակ տեռորի դեմ՝ հայ աշխատավորության վճռական պաշտպանությամբ հանդես է գալիս նաև մենշևիկյան լծի տակ հեծող եղբայրական վրաց ժողովուրդը և նրա շահերի խնդրական պաշտպան Վրաստանի Կոմունիստական պարտիան։

Վրաստանի բազմաթիվ քաղաքներում և գյուղերում, բոլշևիկների ղեկավարությամբ, դաշնակների գազանությունների դեմ ուղղված բողոքի ասանյակ բանաձևեր են ընդունվում։

Ահա դրանցից մեկը. «Վրաստանի Կոմունիստական կուսակցության Փոթու Քաղաքային Կոմիտեի սեպտեմբերի 5-ի նիստը, յաշեյկաների ներկայացուցիչների հետ միասին, ոտքի կանգնելով հարգեց Հայաստանի սպիտակ տեռորի զոհերի—հեղափոխության անձնվեր հերոսների—Ալավերդյանի, Մուսայելյանի, Ղարիբջանյանի և ուրիշների հիշատակը, որից հետո հուզված ժողովը հետևյալ բանաձևն ընդունեց։

Փոթու պրոլետարիատը և առաջավոր մասսաները արհամարհանքի և զայրույթի բողոք են հայտնում դաշնակային կեղտոտ ու գազանային հիմար վերաբերմունքի դեմ։ Մենք պահանջում ենք, սպիտակ տեռորին անմիջապես վերջ տալ։

Դադարեցրեք կոմունիստներին հալածելը և անմիջապես մեր բոլոր ընկերներին բանտերից ազատեցեք...»[1]։

Խոսելով Մայիսյան ապստամբության ճնշումից հետո Հայաստանում և Վրաստանում տիրող դրության մասին, Միխա Ցխակայան 1920 թվականին գրել է. «...Հունգարական դահիճ Խորտիի տեռորից ավելի դաժան սպիտակ տեռորը թագավորում է փոքրիկ Հայաստանում և մենշևիկյան Վրաստանը, իհարկե, ծափահարում է իր դաշնակցին՝ կոմունիստների նկատմամբ նման ռեպրեսիաների համար։

Բայց կենդանի է կոմունիզմը և՛ դաշնակների կողմից ճնշված Հայաստանում, և՛ Վրաստանում։ Հայաստանում սպիտակ տեռորի դեմ բողոքի և վրդովմունքի տասնյակ բանաձևեր են հանվում Վրաստանի քաղաքների և խուլ գյուղերի կոմունիստական բջիջները։

Մեր պարտիայի Թիֆլիսի Կոմիտեն կոչ է հրապարակում բոլոր ազնիվ ռևոլյուցիոներներին ու բանվորա-գյուղացիական մասսաներին և Կոմինտերնին՝ իրենց ձայնը բարձրացնելու հայկական

---

1 «Կոմունիստ» (Բաքու), № 111, 1920, 1 հոկտեմբերի։

դաշնակ սպիտակգվարդիականների գազանությունների դեմ...»[1]։

Վրաստանի Կոմունիստական պարտիայի Թիֆլիսի Կոմիտեի կոչի մեջ ասվում էր. «Վերջերս Հայաստանում սպիտակ տեռորը զազրելի տճրադործության ամեն սահման անցնելով՝ դեղին ազդասիրության շիրմայի տակ սև ռեակցիայի դուռն է ծեծում ցինիկաբար։

Ամբողջ աշխարհի բանվորա-գյուղացիական մասսաների առաջ բարոյապես սնանկացած ու իայտառակված հայ դաշնակցական կառավարությունը գազանային կատաղությամբ դնդակահարում է կոմունիստական դաղափարի քաջարի մարտիկներին։

...Վրաստանի Կոմունիստական կուսակցության Թիֆլիսի Կոմիտեն, հարգելով դնդակահարված կոմունիստների թանկագին հիշատակը՝ հանձին Ս. Ալավերդյանի, Մուսայելյանի, Ղարիբջանյանի և մյուսների, որոնք զոհաբերվեցին հեղափոխության սեղանի վրա, դաշնակցական սև ռեակցիայի դահիճների ձեռքով, դիմում է հանուն հեղափոխության և արդարության՝ ամբողջ աշխարհի բոլոր հեղափոխական և բանվորական կազմակերպություններին, 3-րդ Ինտերնացիոնալի

[1] «Կոմունիստիչեսկի Ինտերնացիոնալ», № 15, 1920, էջ 3124—3125։

Գործադիր Կոմիտեին, Վրաստանի և Հայաստանի բոլոր պրոֆեսիոնալ միություններին, գործարանային կոմիտեներին, բանվորա-գյուղացիական մասսաներին և այն բոլոր հեղափոխականներին, որոնք բանվորական դատի և հեղափոխական դաղափարների ազնիվ պաշտպանն են հանդիսանում,—մեր կազմակերպության հետ միասին միահամուռ ու եռանդուն կերպով բողոքել դաշնակցական կառավարության սպիտակ տեռորի, գնդակահարությունների և այլ դազանային հալածանքների դեմ, որ սկսվել է Հայաստանում կոմունիստների և նրանց հետևողների ու համակրողների դեմ»[1]։

Հայաստանի ռևոլյուցիոն մարտիկներին օգնելու համար ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի օժանդակությամբ ստեղծվում է «Կարմիր խաչ», որն իր բաժանմունքներն ուներ Երևանի և Ալեքսանդրոպոլի պարտիական կազմակերպություններին կից։ «Կարմիր խաչի» կազմակերպման գործին ղեկավար մասնակցություն է ունենում Կովկասյան Երկրային Կոմիտեի անդամ Նինա Ալաջալովան, որը սկզբում գտնվում էր Ալեքսանդրոպոլում, իսկ մայիսից հետո Թիֆլիսում։

Կոմունիստական պարտիայի, Սովետական կա-

[1] «Կոմունիստ» (Բաքու.), № 101, 1920, 20 սեպտեմբերի։

ռավարության, Սովետական Ադրբեջանի, Վրաստանի աշխատավորության այդ միջոցառումներն ու օժանդակությունը հայ աշխատավորությանը, Հայաստանի Կոմունիստական պարտիային փրկեցին էլ ավելի ծանր կորուստներից, անգնահատելի նշանակություն ունեցան նրանց հետագա պայքարի համար։

Զնայած դաշնակների և օտարերկրյա իմպերիալիստների կողմից Հայաստանի ռևոլյուցիոն բանվորների, գյուղացիների և մասնավորապես կոմունիստական կազմակերպությունների դեմ ուղղված ամենաբարբարոս հալածանքներին, Հայաստանի աշխատավորների պայքարը Սովետական իշխանության համար գնալով ուժեղանում է։ Կոմունիստական գաղափարները խոր արմատներ էին գցել աշխատավոր ժողովրդի մեջ, որի լավագույն ներկայացուցիչները մտնում էին Կոմունիստական պարտիայի շարքերը։ Մասսաների հետ ունեցած կապերի ամրապնդմամբ է բացատրվում այն, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպություններն ամենադաժան հետապնդումների ենթարկվելուց հետո էլ դարձյալ ուժ են գտնում գործելու և աշխուժացնելու իրենց աշխատանքները։ Կոմունիստները խոր ընդհատակում շարունակում են պահպանել աշխատավորության մեջ ռևոլյուցիոն մարտական ոգին և պատրաստել

նրանց նոր մարտերի։ Եվ իզուր էին դաշնակ դահիճները շտապում հայտնել Վաշինգտոնի, Լոնդոնի, Փարիզի և Հռոմի իրենց տերերին, թե «...բոլշևիկյան շարժումը Հայաստանում... ճնշված է»[1]։ Այդ դատարկ սնապարծություն էր։ Հայաստանի աշխատավոր մասսաները երբեք չդադարեցրին իրենց հերոսական պայքարը Սովետական իշխանության հաղթանակի համար։ Այդ պայքարը կոմունիստների ղեկավարությամբ նրանք էլ ավելի ուժեղացրին և ռուս մեծ ժողովրդի օգնությամբ հասցրին կատարյալ հաղթանակի՝ Հայաստանում Սովետական իշխանության հաստատմանը։

---

1 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, գ. 764, թ. 118։

## ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

*Մինչև 1920 թ. մայիսը Հայաստանում արդեն ստեղծվել էին բոլոր անհրաժեշտ օբյեկտիվ պայմանները, հաղթական ապստամբությամբ սովետական կարգեր հաստատելու համար։ Երկրի վերնախավերը ապրում էին տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամ։ Հին ձևով կառավարել նրանք այլևս չէին կարող։ Դաշնակցության ստեղծած տեռորիստական ռեժիմը և անվերջ ավանտյուրիստական պատերազմները լցրել էին աշխատավոր մասսաների համբերության բաժակը։ Նրանց ճնշող մեծամասնությունը պատրաստ էր ղենքը ձեռքին պայքարելու իր ազատության համար։ Հայաստանի ներսում ստեղծված այդ պայմաններին ավելանում էին վճռական ու կարևորագույն նշանակություն ունեցող արտաքին հանգամանքները՝ Սովետական Ռուսաստանի փայլուն հաղթանակները, Կարմիր Բանակի առաջխաղա-*

ցումը դեպի Անդրկովկաս և Սովետական իշխանության հաստատումը Ադրբեջանում։

Մայիսմեկյան ցույցերը Հայաստանում պարզ կերպով ցույց տվին, որ զինված ապստամբության միջոցով դաշնակների տիրապետության տապալումը և Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում միանգամայն հաստատված հարց էր։

«Մայիսմեկյան ցույցերի հաջողությունն ամենուրեք ակնհայտորեն ցույց տվեց,—ընդգծում է ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեն իր զեկուցագրում,—թե որպիսի խոր արմատներ է ձգել պարտիան լայն մասսաների՝ այդ թվում նաև զինվորական մասսաների մեջ... հողը գրեթե ամենուրեք լրջորեն պատրաստված էր, դա մի պատահական, արմատազուրկ ապստամբություն չէր, բնավ։ Երբեք»[1]։

Այդպիսի պայմաններում անհրաժեշտ էր ճկունություն ու վճռականություն ցուցաբերել և համարձակ կերպով ղեկավարել մասսաների հերոսական պայքարը։ Բայց ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեն և Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն թույլ տվեցին լուրջ քաղաքական և ռազմա-ստրատեգիական սխալներ։ Նրանք չկարողացան միավորել Հայաստանի տարբեր շրջանների ապստամբների ուժերը, ցուցաբերեցին անվճռա-

[1] ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարեկ, ֆ. 33։

կանություն և անթույլատրելի բարեհոգություն թշնամիների նկատմամբ։

ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեն և Հայաստանի Ռազմա-հեղափոխական Կոմիտեն չկարողացան կիրառել ապստամբության, որպես արվեստի, մարքսլենինյան գլխավոր կանոնները, որոնք հաղթական ապստամբության համար պահանջում են. «1) Երբեք չխաղալ ապստամբության հետ, այլ սկսելով այն՝ հաստատ իմանալ, որ պետք է մինչև վերջը գնալ։

2) Անհրաժեշտ է ուժերի մեծ գերակշռություն հավաքել վճռական վայրում, վճռական մոմենտին, որովհետև հակառակ դեպքում թշնամին, ունենալով ավելի լավ նախապատրաստություն ու կազմակերպություն, կոչնչացնի ապստամբներին։

3) Քանի որ ապստամբությունը սկսված է, պետք է գործել ամենամեծ վճռականությամբ և անպատճառ, անպայման անցնել հարձակման։ «Պաշտպանվելը զինված ապստամբության մահն է»։

4) Պետք է աշխատել թշնամուն հանկարծակիի բերել, գտնել այն մոմենտը, երբ նրա զորքերը ցրված են։

5) Պետք է աշխատել ամեն օր, թեկուզ փոքրիկ հաջողություններ ձեռք բերել (կարելի է ասել ամեն ժամ, եթե գործը վերաբերում է մի քաղա-

քի), ինչ էլ լինի՝ պահպանելով «քարոյական գերակշռությունը»»[1]:

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները չկարողացան ժամանակին ուղղել ապըստամբության ղեկավար օրգանների սխալները, հաղթահարել նրանց տատանումներն ու անվճռականությունը, ինչպես նաև ժամանակին մերկացնել դավաճանական տարրերին:

Այս սխալներից էլ օգտվեց թշնամին, ժամանակ շահեց, մոբիլիզացրեց իր ուժերը և նետեց ապստամբների դեմ:

Մայիսյան ապստամբությունը ճնշելու գործում ստոր դեր կատարեցին ամերիկա-անգլիական ինտերվենտները: Նրանք, վրացական մենշևիկների հետ միասին, արգելեցին Վրաստանի երկաթուղով ամեն տեսակ ապրանքների մուտքը Հայաստան: Հասկելի կարգադրությամբ Ալեքսանդրոպոլում գտնված ամերիկացիները փչացնում էին պարենամթերքները, փորձում էին խուճապ առաջացնել քաղաքում, բնակչությանը կանգնեցնել սովի սպառնալիքի առաջ: «...Մեր մայիսի 1-ի հաջողությունից հետո,— գրել է Ս. Մուսայելյանը,—ամերիկացիք սկսել էին վատնել ու թալանի տալ պարենավորման մթերքները, տր վաճառվում

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 211:

կամ բաժանվում էին սպեկուլյանտների և դաշնակների կողմից»[1]։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստները, Դենիկինն ու Վրանգելը զենք ու զինամթերք են մատակարարում դաշնակներին, ռևոլյուցիոն շարժումները ճնշելու համար։ ԱՄՆ-ի կառավարությունը ուզում էր պատժիչ ջոկատ ուղարկել ապստամբների դեմ։

Մայիսյան ապստամբության ծավալման վրա բացասաբար անդրադարձավ անգլո-ամերիկյան և ֆրանսիական իմպերիալիստների հովանավորությամբ մուսավաթականների Գյանջայում կազմակերպած խռովությունը, որը ստիպեց XI Կարմիր Բանակի զորամասերին իրենց ուժերը կենտրոնացնել խռովարարների դեմ, և այդ անել այնպիսի պայմաններում, երբ սկսվել էր Անտանտայի երրորդ արշավանքը Սովետական երկրի վրա։

Այս բոլորից օգտվեց դաշնակցական կառավարությունը և, Հայաստանի բոլոր ռեակցիոն ուժերի հետ դաշնակցած օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ դաժանորեն ճնշեց Մայիսյան ապստամբությունը։

---

[1] ՄԵԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի պարտաբերով, ֆ. 15։

## ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*Մայիսյան ապստամբությունը Հայաստանում բանվորների, գյուղացիների և զինվորների մասսայական ռևոլյուցիոն-ազատագրական շարժում էր՝ ուղղված դաշնակների և օտարերկրյա իմպերիալիստների դեմ, հանուն Սովետական իշխանության։*

*Մայիսյան ապստամբության շարժիչ ուժերը բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն էին։ Ապստամբության մեջ հեգեմոն դերը պատկանում էր բանվոր դասակարգին, որի իսկական առաջնորդը, ղեկավար ուժը կոմունիստներն էին։ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները հերոսական ու անձնվեր աշխատանքով նախապատրաստեցին ու անցկացրին Մայիսյան ապստամբությունը, ժողովրդական այդ հզոր շարժումն ուղղեցին դաշնակցական ռեժիմի դեմ, նրա նպատակակետը դարձրին իմպերիալիստական պետությունների գործակալների ջախջախումն*

ու դուրս վռնդելը Հայաստանից և երկրում սովետական կարգերի հաստատումը, Սովետական ռեսպուբլիկաների եղբայրական ընտանիքի մեջ մտնելը։

Դեռևս այն ժամանակ, 1920 թ., Հայաստանում Մայիսյան ապստամբությունը գնահատվեց որպես հերոսական ազատագրական շարժում։ Ապստամբության մասին հիացմունքով գրեցին ոչ միայն Ռուսաստանի և Անդրկովկասի, այլև արտասահմանյան շատ պրոգրեսիվ թերթեր։ Կոմունիստական մամուլը Հայաստանի աշխատավորության մայիսյան ելույթները բնորոշեց որպես «պայծառ էջ հայ ժողովրդի պատմության մեջ»[1]։

Մայիսյան ապստամբությունը պատմական կարևոր նշանակություն ունեցավ։ Մայիսյան օրերին հայ ժողովուրդը հերոսական նոր էջեր գրեց իր ազատագրական պայքարի պատմության մեջ։ Այդ օրերին նա մի անգամ ևս ցույց տվեց, որ իր բախտը անդառնալիորեն կապել է ռուս մեծ ժողովրդի, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի բախտի հետ և իր փրկության միակ ելքը գտել Սովետական իշխանության գաղափարի մեջ։

Մայիսյան շարժումների ժամանակ, Հայաստանի բանվորներն ու ռևոլյուցիոն դյուղացիները

[1] «Կոմունիստ Գրուզիի», № 9, 1920, 29 հոկտեմբերի։

անցան քաղաքական դաստիարակության հիանալի դպրոց, ձեռք բերեցին քաղաքացիական կռիվների հարուստ փորձ, որը հետագայում օգտագործվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման և ապա քաղաքացիական կռիվների շրջանում։

«...Քաղաքացիական պատերազմի դպրոցը,— գրել է Վ. Ի. Լենինը,— իզուր չի անցնում ժողովուրդների համար։ Այդ մի ծանր դպրոց է, և նրա լիակատար դասընթացն անխուսափելիորեն պարունակում է իր մեջ կոնտրռևոլյուցիայի հաղթանակներ, գազազած ռեակցիոներների սանձարձակություններ, հին իշխանության վայրագություններ խռովարարների նկատմամբ և այլն։ Սակայն միայն մոլի պեդանտները և խելքը կորցրած մումիաները կարող են մորմոքվել ժողովուրդների՝ այդ տանջալից դպրոցը մտնելու առթիվ. այդ դպրոցը սովորեցնում է ճնշված դասակարդերին քաղաքացիական պատերազմ վարելը, սովորեցնում է հաղթական ռևոլյուցիա...»[1]։

Մայիսյան ապստամբությունը ժողովրդական մասսաների ծոցից առաջ քաշեց Սովետական իշխանության համար մարտնչող խիզախ, անձնվեր մարտիկներ, որոնք հաղթահարելով բոլոր դժվարությունները, հերոսաբար պայքարում էին հայ ժողովրդի ազատագրության համար։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 217։

Հայ ժողովրդի հիշողության մեջ միշտ վառ է մայիսյան անձնուրաց հերոսների պայծառ հիշատակը, նրանց խիզախ պայքարը աղատ ու երջանիկ կյանքի համար, նրանց հայրենասիրական սխրագործությունները, որոնք նոր սերունդների դաստիարակման համար անսպառ աղբյուր են։

1921 թ. մայիսի 10-ին, Ալեքսանդրոպոլում մայիսյան ապստամբության առաջին տարեդարձի օրը, ՀՍՍՌ Ժողկոմսովետի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը ասել է. «Խորհրդային իշխանության սկիզբը անցյալ տարվա Մայիսյան ապստամբությունն է։ Դեռ այն ժամանակ կարող էինք ասել, որ Խորհրդային իշխանության հաղթանակը ապահովված է քանի կա աշխատավորություն, որի վրա Խորհրդային իշխանությունը կարող էր հենվել երկու տարով։

Այսօր մենք ծունկ չոգենք Ալեքսանդրոպոլի հերոսների առաջ, նրանք արին այն, ինչ որ պիտի անեին։ Դասեր պիտի առնենք Ալեքսանդրոպոլի ապստամբությունից։ Ամենագլխավոր դասը դա այն գիտակցությունն է, որ Հայաստանի աշխատավորության համար չկա փրկություն առանց Խորհրդային իշխանության»[1]։

---

[1] «Կոմունիստ», № 82, 1921, 13 մայիսի։

* * *

Մայիսյան փառապանծ ապստամբության հերոսների արյունը, որը թափվեց ժողովրդի ազատության և երջանկության համար, իզուր չկորավ։ Հաշվի առնելով Մայիսյան ապստամբության դասերը, Հայաստանի աշխատավորներն ուժեղացրին իրենց ռևոլյուցիոն-ազատագրական պայքարը դաշնակների դեմ և, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, 1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատեցին Սովետական իշխանություն։ Իրականացան հայ ժողովրդի լավագույն զավակների դարավոր իղձերը՝ Հայաստանն ազատ ու երջանիկ տեսնելու մասին։ Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը ջերմորեն ողջունեցին հայ ժողովրդի պատմական հաղթանակը։ «Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն» —գրել է Ի. Վ. Ստալինը «Կեցցե՞ Սովետական Հայաստանը» հոդվածում[1]։

Սովետական իշխանության տարիներին, շնորհիվ Կոմունիստական պարտիայի իմաստուն ազգային քաղաքականության, նախկինում տանջված ու բազմաչարչար, սովի, քայքայման ու գաղթի մատնված Հայաստանը այժմ դարձել է

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 458։

ազատ ու անկախ, երջանիկ ու ծաղկուն ռեսպուբլիկա, որը Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության մեծ ընտանիքում, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, դնում է դեպի կոմունիզմի լուսաշող դագաթները։

Հայ ժողովրդի կամքով Հայաստանից ընդմիշտ վռնդված դաշնակ ավանտյուրիստները, անցնելով արտասահման, հավատարիմ իրենց «կոչմանը», ծառայության մտան օտարերկրյա իմպերիալիստների մոտ։ Լծվելով պատերազմի ամերիկյան հրձիգների մարտակառքին, նրանք օգտագործվում են որպես հետախուզության գործակալներ՝ լրտեսական, դիվերսիոն, տեռորիստական ակտերի համար՝ ընդդեմ Սովետական Միության, ժողովրդական դեմոկրատիայի երկրների և դեմոկրատական շարժման։ Հայ ժողովուրդը բուռն ատելությամբ է հիշում դաշնակ բարբարոսներին, որոնք նրան անթիվ ու անհամար աղետներ բերեցին։ Արտահայտելով իր ժողովրդի այդ զգացմունքները, մեծ պոետ Եղիշե Չարենցը «Դաշնակցականներին» բանաստեղծության մեջ գրել է.

Լծված տերերի շառաչուն կառքին՝
Հոնդում եք դուք այդտեղ վայրահաչ.
Ժանգոտած սուսեր ձեռքերիդ պահած՝
Անկում եք կարդում իմ նոր աշխարքին։

*Օ, դո՛ւք, ողբալի պնակալեզներ,*
*Բռնակալների մի հետին քուրջում*
*Կծկված՝ արդյոք կարո՞ղ եք տեսնել,*
*Թե ինչո՛վ ենք մենք ապրում ու շնչում[1]։*

*Սակայն, որքան էլ վայրահաչեն դաշնակցական թափթփուկները՝ շրջել պատմության անիվը նրանք չեն կարող։ Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա օտարերկրյա իմպերիալիստների այդ ստոր ոպասավորների սև գործերը։ Հայաստանի աշխատավորության սրտերում միշտ վառ է մայիսյան ապստամբության անձնվեր հերոսների պայծառ հիշատակը։*

*«Հայ ժողովրդի շատ ռևոլյուցիոն մարտիկներ,—ասել է Վ. Մ. Մոլոտովը,—իրենց կյանքն են տվել, զոհվել են՝ իրենց ժողովրդի համար ազգային-ազատ, երջանիկ կյանք ձեռք բերելու համար»[2]։ Այդ ռևոլյուցիոն մարտիկների մեջ իրենց պատվավոր տեղն ունեն մայիսյան ապստամբության հերոսները, որոնք տվեցին կոմունիզմի համար անձնվիրաբար պայքարելու փայլուն օրինակ և այսօր էլ ընթանում են իրենց ժողովրդի հետ՝ ոգեշնչելով նրան նոր սխրագործությունների՝ ի փառս Սոցիալիստական Հայրենիքի։*

---

[1] *Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, Հայպետհրատ, 1951, էջ 106։*

[2] *«Պրավդա», № 6, 1936։*

# ՀԱՎԵԼՎԱԾ

(ԵՐԿՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՄԱՅԻՍՅԱՆ
ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ)

## 1920 Թ. ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ, ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ[1]

### ՄԱՀԱՊԱՏԺԻՑ ԱՌԱՋ

**Ճառ՝ արտասանված մայիսի 31-ին, Արտակարգ դատարանում՝ Հայաստանում քաղաքական ելույթի գործի կապակցությամբ**

*Դատարանի պարոնայք անդամներ.*

*Ինչպես երևում է մեղադրական ակտից, դուք ինձ մահապատժի եք դատապարտում մայիսի 8-ի օրենքով։*

*Դուք ինձ կոնկրետ մեղադրում եք պետական դավաճանության մեջ։*

*Դուք այդ դավաճանության դրսևորում եք տեսնում, առաջին՝ պրոլետարական մեծ տոնի՝ մայիսի 1-ի օրը արտասանած իմ ճառում, որտեղ ես մասսաներին կոչ եմ արել տապալել բուրժուական*

---

1 *Բերվում է մասնակի կրճատումներով։*

իրավակարգը գոչելով՝ «կորչի Խատիսովի մինիստրությունը», «կեցցե՛ Սովետական Հայաստանը»։ Սա առաջին։ Երկրորդ՝ դուք մեղադրում եք ինձ իմ ակտիվ մասնակցության համար, որպես դաշնակների կառավարության դեմ ապստամբության, դինված ելույթի ղեկավարի...

Այսպես, ուրեմն, դուք մեղադրում եք ինձ իմ հակապետական ճառի և պետական հեղաշրջմանը մասնակցելու մեջ։ Ըստ էության այդ երկու կետերն են։ Ես կարծում եմ, որ Հայաստանի դեմոկրատական ռեսպուբլիկայում երաշխավորված են խոսքի ու գործի ազատություն։ Ես խոսքի ազատություն եմ ցանկանում։ Եթե ես ճիշտ չեմ և սխալվում եմ, ապա ոչ մի կասկած չկա այն բանում, որ ինձ չի կարելի մայիսի 8-ի օրենքով դատապարտել մայիսի 1-ին արտասանած ճառի համար։ Չե՞ որ դատավարության պրակտիկայում դեռ այդպիսի դեպք չի պատահել։ Եթե նույնիսկ ենթադրենք, որ պետության ռեսպուբլիկական ձևի մեջ միապետական բռնակալություն է մտցված, ապա այդ դեպքում ևս չի կարելի արդարացնել մայիսի 8-ի կառավարական օրենքը, որ այդ օրենքն իբր թե հակադարձ ուժ ունի, որ իբր թե դատարանը կարող է ամենախիստ պատիժը տալ այն խոսքերի համար, որոնք արտասանվել են

օրենքը հրատարակելուց առաջ, և այն էլ ռեսպուբլիկական-դեմոկրատական պետության մեջ։ Եվ, վերջապես, ե՞րբ է հրապարակվել հենց այդ մայիսի 8-ի օրենքը։ Չէ՞ որ այդ օրենքը ոչ ոքի հայտնի չի եղել հենց դաշնակցության պարտիայի դիկտատուրայում և նրա մամուլում մինչև մայիսի 14-ը, այսինքն՝ մինչև ապստամբության լիկվիդացումը։

Այդ իսկ պատճառով ես դատապարտվել չեմ կարող գոյություն չունեցող օրենքով որպես հեղաշրջման ակտիվ մասնակից (որովհետև ապստամբությունը սկսվեց և իշխանությունը գրավվեց մայիսի 10-ին, իսկ ամսի 14-ի առավոտյան քաղաքն արդեն լիկվիդացնողների ձեռքին էր)։ Այստեղից պարզ է, որ մեղադրանքի երկու կետերն էլ վերանում են։ Բացի այդ, վերանում են նաև վկաների ցուցմունքները։ Այսպես, ուրեմն, ոչ մի կերպ ինձ չի կարելի դատապարտել օրինականության վրա հենվող դատական որևէ կարգով։

Բայց որովհետև սա քաղաքական պրոցես է, դա երկու տրամագծորեն հակառակ պարտիաների, այն է՝ շարժման պարտիայի և դիմադրության պարտիայի պայքար է, ապա պարզ է, որ բոլոր փաստարկները, ինչպես և ինձ պաշտպանելու համար բերված փաստաթղթերը ավելորդ են։ Ես պետք է դատապարտվեմ որպես կոմունիստ, ինձ

անպայման պետք է դատել հենց այն պատճառով, որ ես դաշնակների պարտիայի գերեզմանափորն եմ, որ ես նստած եմ այնտեղ, որտեղ ոչ միայն դատարանն է դաշնակցական, այլև հենց իրենք՝ վկաները։

Այսպես, ուրեմն, ես ձեր առջև կանգնած եմ ոչ որպես օրենքի հիման վրա դատապարտյալ, այլ որպես թշնամական պարտիային պատկանող անձնավորություն, որպես ռևոլյուցիոներ, որը ձեզնից թողություն և պատժի մեղմացում չի խնդրում։

Դուք հարցնում եք, թե ես ինչ մոտիվներից դրդված եմ մասնակցել քաղաքական ելույթին։

Պատասխանում եմ, որ մեծ ռևոլյուցիայի բոլոր ժամանակներում երբեք ցածր բնաղդները չեն ղեկավարել իմ գործողությունները և ելույթները քաղաքական արենայում, ինձ մոտ երբեք չեն եղել փառասիրության և սնափառության խղճուկ նկատառումներ։ Ես ղեկավարում եմ Կոմունիստական պարտիայի կազմակերպությունը Ալեքսանդրոպոլում ռևոլյուցիայի առաջին իսկ օրերից...

Ես չեմ պատկանում այն պարտիական աշխատողների թվին, որոնց միավորում են անձնական շահերը և բոլշևիկների հանդեպ ունեցած սարսափը։ Մեզ՝ կոմունիստներիս միավորում են ընդհանուր շահերը։

Վերջին ամիսներին, շնորհիվ քաղաքական իրադրության կտրուկ փոփոխության հօգուտ Սոցիալիստական Ռուսաստանի, ինձ լրջորեն զբաղեցրեց հայկական հարցը։ Ես խորապես համոզված էի, որ Հայաստանի կառավարությունը, հանձին դաշնակների տիրապետող պարտիայի, կողմնորոշվելով դեպի աշխարհիս ուժեղները, դեպի իմպերիալիստական պետությունները, կկործանի Հայաստանի բազմաչարչար աշխատավորության վերջին մնացորդները։ Իմ այդ համոզումն է՛լ ավելի խորացավ այն բանից հետո, երբ հեղաշրջումից ու դատավարությունից քիչ առաջ հենց Հայաստանի կառավարության անդամ Ջամալյանը անկեղծորեն խոստովանեց, որ իրենք սխալվել են՝ օգնություն սպասելով Անտանտից հայկական հարցը լուծելու գործում։ Դասախոսը գիտակցեց, որ կառավարությունը կոտրած տաշտակի առաջ է կանգնած, բայց քանի որ նրա մոտ բացակայում են համարձակությունն ու հետևողականությունը, որից զուրկ են բոլոր մանրբուրժուական պարտիաները, նա՝ Ջամալյանը չասաց, թե կառավարությունը ինչպես կարող է դուրս գալ այդ փակուղուց։ Ես որպես ընդդիմախոս ասացի դասախոսին, որ երբ հայ աշխատավորական մասսան դեն նետի սև ուժերը և ձեռք մեկնի Սովետական մայր Ռուսաստանին, միայն այդ դեպքում կփրկվի սովից մեռնող և Հա-

յաստանում տիրող բռնությունից ու կամայակա-
նությունից տանջվող գյուղացիությունը։ Այլ կերպ
անկարելի է։ Իմ խոր համոզմամբ քաղաքական
իրադրության այնպիսի արագ փոփոխման պայ-
մաններում, երբ կոնտրռևոլյուցիայի բոլոր ուժերը
ջախջախվեցին զարնվելով ռուս պրոլետարիատի
գրանիտե կրծքին, երբ Արևմուտքում դանդաղ, բայց
անշեղորեն հասունանում է պրոլետարիատի դիկ-
տատուրա հաստատելու ձգտումը, իսկ Արևելքում՝
ազգային ինքնորոշման և իմպերիալիստական
լծից ազատագրվելու ձգտումը, Ռուսաստանը սին-
թեզի է բերել այդ երկու մարտնչող ուժերը և
վերցրել է համաշխարհային ռևոլյուցիայի կուրսը,
որ բազմաչարչար Հայաստանը վերջնականապես
կխեղդվի անծայրածիր մահմեդական ծովում, եթե
նրա նավը կանգ չառնի Սոցիալիստական Ռու-
սաստանի նավահանգստում։

Հայաստանը պետք է ընդհանուր լեզու գտնի
ո՛չ միայն հարևան պետությունների, այլև իր երկ-
րի հարևան ազգությունների հետ։ Հայաստանի
կառավարությունը, երկու տարի գտնվելով իշխա-
նության ղեկի մոտ, չկարողացավ այդպիսի լեզու
գտնել։ Ասենք ցանկության դեպքում էլ չէր կարող
գտնել, որովհետև դրան խանգարում էր թյուր-
բերի նկատմամբ ատելության գիծ վարելը։ Դա
բոլոր ազգայնական պարտիաների յուրահատկու-

թյունն է, լինեն դրանք դաշնակները Հայաստանում, թե մուսավաթականները Ադրբեջանում։ Եվ ահա այն ժամանակ, երբ «Մուսավաթ» պարտիայի ավերակների վրա Ադրբեջանում հաստատվեց Սովետական իշխանություն, Հայաստանի կառավարության այդ միակողմանի արտաքին քաղաքականությունը էլ ավելի ցցուն կերպով երևաց։ Այդ քաղաքականությունն այժմ կհասցնի ավելի մեծ կատաստրոֆաների ու բախումների, եթե Հայաստանը չմտնի Սովետական իշխանության օրբիտի մեջ, ինչպես Ադրբեջանը, այսինքն՝ երբ լինի Սովետական կառավարություն և հայ աշխատավոր մասսաները հարեն Սովետական Ռուսաստանին, երբ ունենան քաղաքականության միատեսակ ուղղություն և կառավարության միատեսակ սիստեմ և հաստատեն բարի դրացիական փոխհարաբերություններ հոգով ու ծավալով մեծ Սովետական Ռուսաստանի հովանու տակ։

Այսպիսով՝ միմիայն հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը փրկելու ցանկությունը, սովահար ու մեռնող Հայաստանի նկատմամբ իմ տածած սերը և Հայաստանի աշխատավոր մասսաների մնացորդները փրկելու իմ խոր համոզումն են ինձ ղեկավարել իմ գործողություններում և քաղաքական ելույթի պրոցեսում...

Դուք ինձ մահվան պատժի եք դատապարտում։ Թող այդպես լինի։ Բռնի կերպով կյանքից զրկելը հազվագյուտ երևույթ չէ ռևոլյուցիոն մրրիկների մեր ժամանակներում։ Ես երջանիկ եմ, որ գնում եմ իմ ընկերների, ժողովրդի լավագույն զավակների՝ Շահումյանի և նրա գլխավորած, գնդակահարված 26 կոմիսարների ուղիով...

Եթե դուք հավատացած եք, որ մահապատժի ենթարկելով ինձ դուք կփրկեք, կկանգնեցնեք հայ չքավորության արյունառությունը, եթե դուք հավատացած եք և համոզված, որ մեր կյանքի գնով ձեզ կհաջողվի հայ չքավոր գյուղացիությանն ու բանվորությանը ազատել չարանենգ սպեկուլյացիայի և անվերջ չարաշահությունների ճիրաններից, ես հաճույքով կգնամ դեպի մահապատիժ հանուն նրանց փրկության և դրանով կկատարեմ միայն ռևոլյուցիոների իմ պարտքը, որը զոհվում է հանուն իր ժողովրդի փրկության։

Կեցցե՞ ռևոլյուցիան, կեցցե՞ ռևոլյուցիոն արյունով փրկվող հայ ազգը։

---

## Ս. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՌԿ(Բ)Պ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ

*Ընկերնե՛ր, հուսով եմ, որ Ալեքսանդրոպոլի բանտից ուղարկած իմ նամակները արդեն հասել են Ձեզ։ Հունիսի 22-ին ինձ և ընկ. Ղարիբջանյանին փոխադրեցին Երևանի Կենտրոնական բանտը։ Բանտ հասցնելուն պես մեզ անմիջապես փակեցին այսպես կոչված «սեկրետում»։ Եթե բանտի բոլոր խցերը համարյա ամբողջ օրը բաց են և բոլոր կալանավորները, այդ թվում նաև քրեական բանտարկյալները համեմատական ազատություն են վայելում, ապա հրամայված է մեր խուցը փակել և բանալին պահել բանտապետի օգնականի մոտ, ընդսմին հրամայված է մեզ զրկել նույնիսկ սահմանված զբոսանքից։ Հունիսի 23-ին, ես մեծ դժվարությամբ հաջողեցրի, որ ինձ գրասենյակ տանեն գանգատ գրելու համար։ Գանգատը կազմելու ժամանակ հսկիչները ճգնում էին խանգարել և ինձ նորից տանել խուցը, բայց ես բողոքեցի և պահանջեցի անհապաղ կանչել դատախազին։ Այդ*

ժամանակ գրասենյակ մտավ ինքը՝ բանտի տեսուչ Բաղդասարյանը, որ կոպիտ տոնով պահանջեց գնալ խուցը։ Ես նրանից ևս պաշտոնապես պահանջեցի կանչել դատախազին և ինքս գնացի խուցը։ Դատախազի փոխարեն մեզ մոտ եկավ բանտի ադմինիստրացիան և փորձեց մեզ նստեցնել մենավոր «սեկրետներում», չնայած որ մեր գործն արդեն լսված-ավարտված է, դատապարտված ենք գնդակահարության, որը փոխարինված է ցմահ տաժանակրությամբ։ Մենք, իհարկե, չենթարկվեցինք այդ պահանջին։

Դրանից հետո բանտում անտանելի ռեժիմ ստեղծվեց։ Մի հետաքրքրական փաստ։ Նախարար Գյուլխանդանյանը իր մոտ էր կանչել բանտի տեսուչ Բաղդասարյանցին և դռռացել նրա վրա. «Ինչպե՞ս եք դուք համարձակվել թույլ տալ, որ հասարակությունը կայարանում ծաղիկներ նետի Մուսայելյանին»։ Դրանից հետո էլ սկսվեցին այդ ռեպրեսիաները։ Ըստ տեղեկությունների, ադմինիստրացիան աշխատում է էքսցեսներ առաջ բերել բանտում, մաուզերիստներ բերել և «անկարգությունները» ճնշելու անվան տակ դատաստան տեսնել մեզ և պարտիայի ակտիվ անդամների հետ, ինչպես արեցին ս. թ. ապրիլի 29-ին, երբ նրանք սպանեցին 2 ակտիվ բանտարկյալի։ Դատական քննիչը, մի ակտիվ դաշնակ, ինձ

հայտնեց, թե իրենք Հայաստանում աշխատում են խեղդել բոլշևիզմը իր բնում, մանավանդ որ իրենց դրությունն այժմ ամուր է։ Շանթը Մոսկվայից հեռագրել է կառավարությանը, որ կառավարությունը հաշվի չառնի Չիչերինի նոտաները և աշխատի խեղդել ու դատաստան տեսնել բոլշևիկների հետ։

Ընկերնե՛ր, դաշնակների լկտիությունը չափ ու սահման չունի։ Մի՛ հավատացեք Օհանջանյանի հունիսի 7-ի պատասխան նոտաներին, որ իբր թե իրենք կոմունիստների չեն գնդակահարել։ Մեր շատ և շատ ընկերների սպանել են թե դատարանով և թե ծածուկ։ Մենք այժմ պարզում ենք տուժածների թիվը։ Հավատ մի ընծայեք նաև մայիսյան իրադարձությունների մասին Հայաստանի կառավարության հաղորդումներին։ Նրանք ցանկանում են համարյա ամբողջ Հայաստանն ընդգրկած խոր ժողովրդական շարժմանը տալ մի բուռ մարդկանց «ավանտյուրայի» բնույթ։ Ներկա մոմենտում ևս ժողովրդական մասսաների մեջ հակայական դժգոհություն կա կառավարությունից, բայց այդ մասսաները ահաբեկված են մաուզերիստների կողմից։

Հայկական իրականության սպեցիֆիկ երևույթ հանդիսացող մաուզերիզմն իր ամենագարշելի ձևով այժմ իր գագաթնակետին է հասել։ Երկրում

կատարյալ անարխիա է։ Կողոպուտները, բռնությունները, հարբած խրախճանքները ամենօրյա և ամենասովորական երևույթներ են։ Կառավարության ամեն մի գործակալ ունի մաուզերիստների իր խումբը, որոնց վրա նա հենվում է, և որոնց հրամանները նա կատարում է։ Երկրի իրական տերերը միմիայն մաուզերիստներն են։ Նրանցից բացի ապահովված չէ ոչ մեկի ո՛չ կյանքը, ո՛չ գույքը և ո՛չ էլ պատիվը։ Ճիշտ է, կոմունիստներից բացի բանտերը լցված են նաև քրեական կալանավորներով, բայց քրեական հանցագործներից բանտ են ընկնում միայն կամ «յոթ գդալ մածուն», կամ «մի քյուֆթա» գողացածները։ Բարձրաստիճան խոշոր գողերն ու խարդախ մարդիկ, որոնք միլիոններով են հափշտակում ժողովրդական գույքը և սովից մեռնող հարյուրավոր ու հազարավոր աշխատավորների դիակների վրա իրենց համար խոշոր հարստություն են դիզում, այստեղ, իհարկե, չեն ընկնում։ Եթե դուք քայլեր ձեռնարկեք մեզ փրկելու ուղղությամբ, ապա անպայման ռեալ երաշխիք պահանջեցեք մեզ սովետական տերիտորիա հասցնելու հարցում, որովհետև նրանք կաշխատեն անպատասխանատու մարդկանց ձեռքերով ինձ և թերևս մեկ ուրիշի ևս «այն աշխարհն ուղարկել»։ Համենայն դեպս, ընկերներ, իմացեք, որ մեր ամեն մի ընկերոջ սպանությունը դաշնակների կազմակերպած գործն է։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | Էջ |
|---|---|
| Իրադրությունը Հայաստանում Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո . . . | 7 |
| Մայիսյան ապստամբությունը Հայաստանում . . | 29 |
| Մայիսյան ապստամբության պարտության պատճառները . . . . . | 90 |
| Մայիսյան ապստամբության նշանակությունը . . | 95 |
| Հավելված . . . . . | 103 |

Տպագրվում է Վ. Մ. Մոլոտովի անվան
Երևանի պետական համալսարանի խմբագրական-
հրատարակչական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Ռ. Լ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

☆

*Հրատարակչ. խմբագիր՝* Մ. Հ. Մկրտչյան
*Տեխնիկական խմբագիր՝* Մ. Հ. Միհաբյան
*Կոնտրոլ սրբագրիչ՝* Թ. Փ. Նիկողոսյան

ՎՖ 11503 Պատվեր 397 Տիրաժ 5000

ԵրՊՀ Խմբ.-հրատ. խորհրդի որոշում № 21, 27/V-1955 թ.։
Ինքնված է արտադրություն 27/V-1955 թ.։ Ստորագրված
է տպ. 17/VII-55 թ.։ Թղթի ֆորմատը 70×108¹/₆₄։
Տպ. 7,5 մամուլ։ Հաշվ.-հրատ. 3,5 մամուլ +11 ներդիր։
Հեղ. 3,35 մամուլ։

Գինը 2 ռ. 50 կ։

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական
համալսարանի հրատարակչության տպարան,
Երևան, Կիրովի փող. № 12

A I 1191